ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՌՅԽԳ. ԻԷ. ՏԱՐԻ | ՀԱՄԱՐ ԵՐԿՐՈՐԴ | ՓԵՏՐՈՒԱՐ 1894 Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

1. ԿԻՐԱԿԷՆ ՍՈՒՐԲ ՊԱՀԵԼ .	33	Եղիշէ վ. Մուրատեան.
2. ՊՍԱԿԻ Ս. ԽՈՐՀՈՒՐԴԸ . .	38	Ա. Տէր-Միքելեան.
3. ԹԷ ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԱՊՐԻԼ ԲԱՂԴԱՒՈՐ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (Թարգմ.)	40	Խորէն Ծ. վ. Ստեփանէ.
4. ԽՂՃԻ ԴԵՐԸ	48	Ղ. Տէր-Աւետիքեան.
5. ՄՐՄՈՒՆՋՔ (Բանաստեղծ.) .	50	***
6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃ. IV ԴԱՐՈՒՄ	52	Ղեւոնդ Սարկաւագ Գեանջեցեան.
7. ՀԱՅԿԱԿԱՆՔ	55	Միաբան.
8. ՏԷՆ.	59	Ե. Մադաթեան.
9. ԼՈՒԱՑԷՔ ՁԵՐ ՁԵՌՆԵՐԸ . .	63	Յ. Ջիլինկիր.
10. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . .	—	

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՌՅԽԳ—1894.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՌՅԽԳ. ԻԷ. ՏԱՐԻ. | ՀԱՄԱՐ ԵՐԿՐՈՐԴ. | ՓԵՏՐՈՒԱՐ 1894 Թ.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԿԻՒՐԱԿԷՆ ՍՈՒՐԲ ՊԱՀԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ։

Արդէն ութ, ինն տարուց աւելի է, որ կիւրակէն սուրբ պահելու մասին խօսւում է, թէ մեր հասարակական շրջաններում և թէ լրագրութեան մէջ։ Հարցը կառավարութեան աջակցութեամբ թէև համարեա արդէն լուծուած է, ասացէք այն է՝ կիւրակէ օրերին թէև այլ ևս առևտուր չեն անում, գործարաններում և արհեստանոցներում չեն աշխատում, գիւղերումն էլ չեն վարում, չեն ցանում և այլն,— սակայն եօթներորդ օրն անցկացնելու մասին ցայսօր հրատարակւում են յօդուածներ, թղթակցութիւններ, լսւում է մի տեսակ բողոք մեր քաղաքներում կիւրակէն անցկացնելու վերաբերութեամբ. գանգատւում են, որ տօն օրերին էլ, հասարակ օրերի նման, եկեղեցիները դատարկ են, իսկ գինետներն ու անառականոցները լի, որ աւազակութիւններն ու մարդասպանութիւնները աւելի տօն օրերին են տեղի ունենում, և այլն և այլն։

Ես կատարելապէս հաւատացած եմ, որ այդ գանգատը իրաւացի է, որ ներկայումս մենք գաղափար չունինք, թէ ինչպէս պէտք է օգտուինք այդ ազատ ժամերից, և գուցէ մէկ միւսից աւելի օգուտ չունինք: Գործակատարը, վաճառականը և արհեստաւորը տօներին պարապմունքից ազատ լինելով, անձնատուր է լինում արբեցութեան և զեղխ կեանքի, վատնում է իւր ամբողջ աշխատանքը և օրուայ մի մասն էլ քաղաքի խուլ անկիւններում անցնելով, կործանում է իւր առողջութիւնը և շատ անգամ վարակում ամբողջ շրջաններ: Եթէ մենք հաւաքէինք վիճակագրական մանրամասն տեղեկութիւններ տարուայ ընթացքում գործուած սպանութիւնների, աւազակութիւնների և ուրիշ յանցագործութիւնների մասին, եթէ մեր բուժարաններում հարցնէին հիւանդներին, թէ երբ, ո՞ր օրն են նոքա վարակուել, համոզուած եմ, որ այդ բոլոր ցաւալի դէպքերի մեծ մասը պատահած կլինի կիւրակէ և տօն օրերին:

Կարդացէք ռուս երևելի վիպագիր Գլեբ Ուսպենսկու գրութիւնները արհեստաւորների կեանքից, կարդացէք և միւսների իրական կեանքից վերցրած վէպերը և ամեն տեղ նոյն ահռելի իրականութիւնը կը պատկերանայ ձեր աչքի առաջ.—կը տեսնէք, որ մի օրուայ, այդ՝ Աստուծուն նուիրուած օրուայ ընթացքում, փչանում է վեց օրուայ աշխատանքը, վաճառւում, խմիչքի է տրւում արհեստաւորի հագի շորը, կօշիկները, շատ անգամ նոյն իսկ ընտանիքի անհրաժեշտ իրերը դրաւ են դրւում, ի հարկէ, այլևս յետ չըստացուելու յուսով, գինետներում, օղետներում և գարեջրատներում և խանգարւում նրա՝ այդ աշխատաւոր հուժկու բազուկների հետևեալ օրերի աշխատանքը, որովհետև նա հարբած է, հիւանդ և մերկ մնացած ու այդ միմիայն կիւրակէ օրուայ շնորհիւ: Վերջապէս մտէք մեր մեծ քաղաքները և տօն ու կիւրակէ օրերին մտէք գինետներն ու կասկածելի հիմնարկութիւնները. ամեն տեղ միևնոյն սարսափելի պատկեր կը տեսնէք.—մեր երիտասարդութիւնը անխնայ վատնում է իւր նիւթական, մտաւոր և ֆիզիքական կարողութիւնը կիւրակէ և տօն օրերին. անհատները միայն գուցէ փոքրիշատէ օգտակար կերպով են գործ դնում իրենց կարճատև կեանքի այդ անգին ժամանակը:

Դեռ Մովսէս մարգարէի օրօք Աստուած տասնաբանեայ պատուիրաններով հրամայում էր սուրբ պահել շաբաթ օրը, որև Իսրայէլացիք չըմբռնելով Աստուածային այդ վեհ պատգամի բուն նշանակութիւնը, ոչ թէ բան չէին անում այդ օրը, այլ և կերակուր անգամ չէին պատրաստում և դորա մէջն էին տեսնում այդ պատգամի էութիւնը:

Սակայն եկաւ Փրկիչը և բացատրելով օրէնքի բուն միտքը, փրկութեան մի նոր աղբիւր բացեց մարդկութեան առաջ, շաբաթուայ եօթն օրերից մինը յատկացնելով աստուածահաճ գործերին, որի կենդանի օրինակը առաջ ինքը տուաւ, երբ Իսրայէլացիք դժգոհութիւն էին յայտնում այն բանի դէմ, որ նա շաբաթ օրը օգնում էր աղքատներին, բժշկում հիւանդներին և քարոզում աւետարանը: Ահա և Փրկչի պատասխանը Իսրայէլացիներին այդ բանի վերաբերութեամբ.—Մատթ. գլ. ԺԲ. 1—9. „Յայնժամ գնաց Յիսուս ընդ արտորայն նոցա ի շաբաթու և աշակերտք նորա քաղցեան և սկսան հասկ կորզել և ուտել: Փարիսեցիքն իբրև տեսին՝ ասեն ցնա. ահաւասիկ աշակերտք քո գործեն, զոր ոչ է արժան գործել ի շաբաթու: Եւ նա ասէ ցնոսա. ո՞չ իցէ ընթերցեալ ձե՞ր զոր արար Դաւիթ, յորժամ քաղցեաւն և որ ընդ նմայն էին. զիա՞րդ եմուտ ի տունն Աստուծոյ, և եկեր զհաց զառաջաւորութեան, զոր ոչ էր օրէն նմա ուտել, և ոչ որոց ընդ նմայն էին, բայց միայն քահանայից: Կամ թէ չի՞ցէ ընթերցեալ յօրէնս, զի ի շաբաթս քահանայքն ի տաճարին պղծեն զշաբաթն, և անմեղք են. բայց ասեմ ձեզ, զի մեծ քան զտաճարն է աստ: Եւ եթէ գիտէիք զի՞նչ է, ողորմութիւն կամիմ, և ոչ զզոհ, ապա ոչ դատապարտէիք դուք զանպարտսն: Զի տէր է շաբաթու որդին մարդոյ:

Եւ գնացեալ անտի Յիսուս, եկն ի ժողովուրդն նոցա։ Եւ անդ էր այր մի, որոյ ձեռն իւր գօսացեալ էր․ հարցին ցնա և ասեն, եթէ պա՞րտ իցէ ի շաբաթու բժշկել, զի չարախօսեսցեն զնմանէ։ Եւ նա ասէ ցնոսա․ ո՞վ իցէ ի ձէնջ մարդ, որոյ իցէ ոչխար մի և անկանիցի այն ի խորխորատ ի շաբաթու, մի՞թէ ոչ ունիցի և յարուցանիցէ զնա․ իսկ արդ, որչափ ևս առաւել է մարդ քան զոչխար․ ապա ուրեմն պարտ է ի շաբաթու բարիս գործել։ Յայնժամ ասէ ցայրն․ ձգեա՛ զձեռն քո, և նա ձգեաց և եղև ողջ իբրև զմիւսն։

Ա․ գլուխ 21․

Նոյն․ Մարկոս Բ․ գլուխ 23—28․

Գ․ գլուխ 2—4․

Ղուկաս․— Դ․ գլուխ 16—31․

Զ․ գլուխ 1—9․

ԺԳ․ գլուխ 10—17․

ԺԴ․ գլուխ 1—7․

Յովհաննէս․— Ե․ գլուխ 9—11․

Է․ գլուխ 21 25․

Թ․ գլուխ 13—18․ և այլն…

„Շաբաթ վասն մարդոյ եղև և ո՛չ եթէ մարդ վասն շաբաթու“։ Մարկ․ Բ․ գլ․ 27։

Կարդալով Ս․ Աւետարանի վերոյիշեալ կտորները, կը համոզուինք, որ այդ օրը բարեգործութեան և թշուառներին օգնելու օր էր և պիտի լինի։ Բայց այժմ մտնում էք եկեղեցի և հազարաւոր բնակիչներ ունեցող քաղաքում այնտեղ հանդիպում էք մի քանի տասնեակ մարդկանց, որոնք պատարագի ժամանակ զբաղուած են սորան նորան բամբասելով և կամ իրենց առօրեայ հաշիւների մասին խօսակցութեամբ, կանայքն էլ իրենց կողմից դիտում են, թէ ո՞վ ինչպիսի շորերով և զարդերով է եկեղեցի եկել, ո՞ր փողոցում ինչ է պատահել և այլն և այլն։ Սոցանից լաւ չեն պահում իրանց և հոգևորականները։ Վերջանում է ժամասացութիւնը և ահա այդ շքեղազգեստ անձինք դուրս են գալիս եկեղեցուց, մի քանի սև կոպէկ նետում դռան առաջ շարուած աղքատներին և կամ առանց ուշադրութիւն անգամ դարձնելու նոցա վերայ, հանգիստ սրտով հեռանում ցրւում են իրենց տները կամ զբօսավայրերը։ Միևնոյն ժամանակ, թէև դեռ վաղ, բայց կը տեսնէք գինետները բազմութեամբ լցուած, որտեղ փչանում են ընտանիքների և հայրերի և նրանց պահող անդամների վերջին կոպէկները, թուլանում նրանց կազմուածքը և դառնանում նրանց սոված և առանց այն էլ զրկանքներով լի ընտանեկան կեանքը։ Էլ չեմ ուզում շարունակել, թէ ինչպէս է անցնում օրուայ միւս մասը զանազան կասկածելի անկիւններում, որոնց պատկերը շատ ցաւալի կլինի և „Արարատի“ էջերում տպուելու անյարմար։

Ինչո՞ւ է այդ այդպէս, ի՞նչ դրութիւն է այս և ո՞ւր է տանում մեզ այդ տեսակ կենցաղավարութիւնը։ Արդեօք մտածե՞լ էք այս հարցերի մասին, արդեօ՞ք երբ և իցէ զբաղեցրե՞լ է ձեզ այդ խնդիրը։

Դա քայքայում է մեր հասարակական կեանքի փոքր ի շատէ գոյութիւն ունեցող հաւասարակշռութիւնը, սառեցնում ժողովրդին իւր ազգային եկեղեցուց, քայքայում ընտանեկան կեանքը և բազմացնելով այն տառապեալ չափահաս և անչափահասների թիւը, որոնք կիւրակէ օրերին երկար շարւում են եկեղեցիների առաջ, հրապարակներում և ճանապարհներին և իրենց ներկայութեամբ ու ցաւալի վիճակով ապտակում են մեծատունների շռայլութիւնը, նրանց „քրիստոնեայ“ անունը և հասարակական պատուասիրութիւնը, ահագին ուժով յետ է մղում ազգային յառաջադիմութիւնն ու պարտաճանաչութիւնը։ Այդ թշուառները գիշեր ժամանակ՝ խուլ փողոցներում, հասարակական այգու թփերի տակ և նստարանների վերայ բացօդեայ ընկած, կամ անտանելի նկուղներում իրար վերայ թափուած, մի կերպ մաշում են իրենց Աստուածային մեծ պարգևը՝—կեանքը։ Իսկ ո՞րչափ աւելի թշուառ է մեր բազմաթիւ որբերի կեանքը, որոնք դեռ մանուկ հասակում դատապարտուած են սովամահ լինելուն, կամ հասարակութեան ապագայ հրէշներ դառնա-

լուն։ Ո՞վ է նետում նրանց այդ կոշտաբեր շաւղի վերայ, ո՞վ է սնուցանում և պատրաստում ազգայ մարդասպաններին և աւազակներին, եթէ ոչ հասարակութիւնը, քրիստոնէայ հասարակութիւնը և բարեգործ, ազգասէր, քահանայ և առաջնորդ տիտղոսներով իրեն կնքող շրջանը, որը կամ չի հասկանում մարդուս պարտականութիւնը, որովհետև նրան այդ հասկացնող չը կայ և կամ չի ուզում բանալ իւր առաջ դրուած Փրկչի խօսքը և այդպիսով իւր վիճակը, իւր և ընկերոջ, ազգակցի կեանքը ապահովել։ Ամենքը միմիայն իրենց եսն ունին ի նկատի և հենց այդ եսի, մարդկութեան այդ դահճի համար զրկում են անխտիր թէ ունևորին և թէ չունևորին. սևացնում սպիտակը, սպիտակացնում սևը և այլն և այլն։ Ոչ ոք չի ուզում հաշուի առնել իւր արածը, այլ պարծենում է իւր ճարպիկութեամբ, մեքենայութեամբ, ստախօսութեամբ և ստոր գործունէութեամբ։ Ոչ ոք չի մտածում, թէ որպիսի մեծ բարիք արած կլինէր ազգին ու եկեղեցուն, եթէ իւր շռայլած և զեղխութեան համար միայն վատնած գումարի հինգ տոկոսը, կամ իւր զանազան թակարդներ լարելու վրայ գործ դրած անդին ժամերը նուիրէր հասարակական ցաւերը դարմանելուն։

Քահանան օրական երկու երեք անգամ մտնում է շատ անգամ բոլորովին դատարկ եկեղեցին և սովորական աղօթքներով բաւականանալով, դուրս գալիս այնտեղից մաքուր և հանդարտ խղճով, կարծելով, որ այդպիսով արդէն կատարել է իւր հովուական մեծ պաշտօնը։ Նա չի մտածում, որ օրական երկու երեք անգամ իրաւունք ունի ժողովրդին դաս տալու, հասկացնելու քրիստոնէութեան փրկարար պահանջները, նա չի ըմբռնում, կամ ծուլութիւնը չի թոյլ տալիս նորան ըմբռնելու, թէ ո՞րքան օգուտ կարող է տալ իւր հասարակութեանը և եկեղեցուն։ Մարդուս կեանքը 40 տարի հաշուած, եթէ շաբաթական միմիայն երկու անգամ նա քարոզի ժողովրդին, իւրաքանչիւր անհատին տուած կըլինի 4160 դաս, որով կարող է ահագին յեղափոխութիւն մտցնել հասարակական մտաւոր և բարոյական կեանքի մէջ և հրաշալի հետևանքների հանդիսատես լինել։

Վրաստանում ապրող հայերի մէջ գոյութիւն ունի քրիստոնէութեան նախնական դարերից մնացած մի քանի սովորութիւններ, որոնցով մարդս հիանում է։ Եկեղեցու շինութեան համար նոքա աշխատում և աշխատեցնում են իրենց անասուններին գլխաւորապէս կիւրակի և տօն օրերին և այդ բանը համարում են Աստուածահաճոյ մի գործ, որովհետև համոզուած են, որ իրենց արածը բարի է։ Բացի դորանից, երբ մինը մեռնում է, թաղելուց յետոյ հաւաքւում են նրա բարեկամներն ու ծանօթները և նրանցից իւրաքանչիւրը օգնում է որբացած ընտանիքին իւր կարողութեան չափով.—մինը փող է նուիրում, երկրորդը ոչխար, երրորդը ցորեն, չորրորդը վառելիք, հինգերորդը խոստանում է աշխատել նրանց արտը կամ այգին մշակելիս և այլն և այլն, և այդպիսով զգալի չդարձնել ընտանիքի կրած կորուստը։ Աշխատանքի միջոցին, եթէ պատահում է կիւրակի կամ տօն օր, նոքա աշխատում են, չեն հանգստանում ասելով, որ իրենց արածը բարի է, Աստուծուն հաճելի։ Եւ իրաւ, մեզանից ո՞րը կարող է ասել, որ նրանց արածը բարի չէ, որ դա մեր պապերից, ընդհանրական կեանքով ապրող քրիստոնեաներից չի մնացել։ Մի՞թէ ուրիշ կերպ էին ծնունդ առել Ներսէս Մեծի ժամանակ Հայաստանի բոլոր անկիւններում շինուած հիւանդանոցները, անկելանոցները, կայարանները և ցայսօր մեզ հիացնող եկեղեցիներն ու ամրոցները։ Մի՞թէ կարծում էք, որ այդ բոլորը կապալով էր արւում, ռոճիկով և արծաթով էր շինւում։ Ո՛չ, դա հետևանք էր խմբակցական, բուն քրիստոնէական աշխատանքի, որը դեռ չէր քայքայուել և եսին անձնատուր եղել։

Ահա ձեզ արգաւանդ հող, ահա ձեզ ձեր փրկարար գործունէութեան անխախտ հիմունքը, ահա ձեզ այն ուժեղ ծառը, որի վերայ

կարող էք պատուաստել հասարակութեան բարեկեցութեան և յառաջադիմութեան համար անհրաժեշտ աշխատանքը, ճշմարիտ քրիստոնէական կենցաղավարութիւնը:

Լաւ և ժողովրդին նուիրուած հովիւը, հասարակական գործիչը ահա թէ ինչ արդիւնք կարող է քաղել վերոյիշեալ սովորութիւններից:—Մեր գիւղացուն շատ հեշտ կարելի է համոզել, որ նա կիւրակէ և տօն օրերին՝ պատարագից յետոյ աշխատի իւր համագիւղացի որբերի և աղքատների կալուածքում, յայտնելով նորան, որ այդ է Փրկչի բուն պահանջը, որ նա էլ մի օր պէտք է մեռնի և նրա ընտանիքն էլ կարող է նոյն դրութեան մէջ ընկնել, օգնութեան կարօտ, աշխատող ձեռք չունենալ, բայց յիշելով, նորա ընտանիքի համար էլ հոգացող, աշխատող կըգտնուի թշուառ օրերին և նա աղքատ ու անտէր չի մնայ: Նորան կարելի է հասկացնել, որ իւր և իւր գիւղացիների կեանքի բարելաւութեան համար հարկաւոր հասարակական հիմնարկութիւնները, ինչպիսիք են եկեղեցին, ուսումնարանը, հիւանդանոցը և այլն, կարելի է շինել և կիւրակէ օրերը պատարագից յետոյ և ոչ թէ անձնական գործերով զբաղուելը, և նա շատ շուտ կըմբռնի այդ բանի օգտակարութիւնը և կտեսնի նորա փրկարար հետևանքը, միայն այս բանի համար հարկաւոր են քահանայք, վարդապետներ, ուսուցիչներ և այլն, որոնք իրանք պէտք է գործի գլուխն անցնեն, և մտնեն այդ ժողովրդի մէջ, նրա հետ աշխատելու և քրտնելու և այդ տեսնող ժողովուրդը կըսիրի, կըպաշտի այդպիսի հոգևորականին և այն դժուար հարցը՝ հոգևորականներին ապահովելու խնդիրը՝ ինքն ըստ ինքեան կըլուծուի:

Աշխատեցէք նախ քաղաքների իւրաքանչիւր եկեղեցու մօտ մի արհեստանոց բանալ և յորդորեցէք, որ վաճառականներն ու ծառայողները նիւթ տան, իսկ արհեստաւորները կիւրակէ և տօն օրերին պատարագին ներկայ լինելուց յետոյ աշխատեն մի երկու ժամ և նրանց ձեռագործների արդիւնքով կըսրբուի շատ թշուառների արտասուքը, կըծածկուին անտէր և անօգնականների մերկ մարմինները և այժմ թափառաշրջիկ կեանքին դատապարտուած անթիւ ընդունակ մանուկների ուժերը ապագայում հասարակութեան համար տոչորուող կըդառնայ:

Այս բանը հեշտ է հասկացնել ամենքին, բոլոր դասակարգերին պատկանող անձանց և ամեն տեղ, որովհետև այսօրուայ միլիօնատէրը վաղը յանկարծ սնանկանում է և դատապարտւում սորան նորան մեկնելու իւր անսովոր ձեռքը:

Գուցէ ինձ կասեն, որ մարդուս հարկաւոր է ֆիզիքական հանգստութիւն, որ նա վեցօրեայ աշխատանքի ժամանակ առանց այն էլ շատ է մաշւում և այլն: Բայց մենք այդ ասողներին կառաջարկենք փորձելու, թէ որքան աւելի կազդուրիչ է և հանգստացուցիչ է մի դոյզն բարի գործը և որքան ոգևորիչ նրա հետևանքը: Այդպէս ուրեմն, փորձեցէք իրականացնել վերոյիշեալները, փորձեցէք ժողովրդին առաջնորդել Փրկչի պատուիրանների համաձայն և այլն, ինչի որ ձգտում ենք տասնեակ և մինչև անգամ հարիւրաւոր տարիների ընթացքում, շատ շուտով կիրականանայ և կըբաղխի մեր դռները:

Կան կիւրակէն սուրբ պահելու և՛ ուրիշ կերպեր, որոնց մասին կը խօսենք մի այլ անգամ:

ԵՂԻՇԷ Վ. ՄՈՒՐԱԴԵԱՆՑ.

ՊՍԱԿԻ Ս· ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ա·

Ինչքան նշանաւոր տեղ է բռնում ընտանիքը քարոյական աշխարհում կազմելով նորա սկիզբն ու հիմունքն, այնքան բարձրացրեց և սրբագործեց նորան քրիստոնէութիւնը: Արդէն միակնութեան հաստատութիւնը տուաւ ամուսնութեան այն դիրքն, որ համապատասխանում է ընտանիքի էութեան: Ինչպէս սուրբ է ընտանիքն, այնպէս և քրիստոնէութիւնը սրբութեան վրայ հիմնեց նորա կազմակերպութիւնը: Միակնութեամբ հաւասարութիւն մտցրեց երկու սեռի անհատների մէջ և ապա պսակն եկեղեցական ս· խորհուրդ դարձնելով, դրաւ նորան աստուածային արքայութեան փոքրիկ պատկերի մէջ: Պսակի նշանակութիւնն այնքան մեծ է քրիստոնէական վարդապետութեան մէջ, որ Պօղոս առաքեալն ասում է· «Արք, սիրեցէք զկանայս ձեր, որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մատնեաց վասն նորա . . . . որ սիրէ զկին իւր, զանձն իւր սիրէ· զի ոչ ոք երբէք ատեաց զանձն իւր, այլ սնուցանէ և դարմանէ զնա, որպէս և Քրիստոս զեկեղեցի· զի անդամք եմք մարմնոյ նորա, ի մարմնոյ նորա և յոսկերաց նորա: Վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքին ի մարմին մի: Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ի Քրիստոս և յեկեղեցի »: 1 Պօղոս առաքեալն այնքան բարձրացնում է պսակի խորհուրդն, որ մինչև անգամ այր և կնոջ նմանեցնում է Քրիստոսին և իւր եկեղեցուն: Այդ նմանութեան սկիզբն դրաւ Քրիստոս, երբ ինքեան փեսայ անուանեց և իւր աշակերտներին մանկունք առագաստի »: Ուստի և իրաւամբ շեշտում է առաքեալը թէ՝ «մեծ է խորհուրդս այս», մինչդեռ մենք կարող ենք ասել՝ մեծ է և աւելի քան մեծ է, որովհետև ոչ մի ուրիշ բան չէ արժանացել այդ բարձր նմանութեան: Միմիայն այդ սուրբ միութեան մէջ է, որ կարող ենք ասել՝ «կին՝ փառք առն իւրոյ է» 1: Տղամարդի յարաբերութիւնը դէպի իւր կինն այնքան սուրբ է, նորա սէրն այնքան բարձր է, որքան սուրբ է և բարձր Քրիստոսի վերաբերմունքը դէպի Եկեղեցին. ուստի և «Պարտին արք սիրել զկանայս իւրեանց իբրև զիւրեանց մարմինս . . . . զի ոչ ոք երբէք ատեաց զանձն իւր, այլ սնուցանէ և դարմանէ, որպէս և Քրիստոս զեկեղեցի »:

Եկեղեցին ճանաչեց ամուսնական կապակցութեան սրբութիւնն, ուստի և չտատանեց ընդունելու Ս· Գրքի ժողովածուի մէջ այն բանաստեղծական գեղեցիկ գրուածքն, որ իրապէս գովաբանում է տղամարդի և կնոջ սէրն ու գեղեցկութիւնը. այդ այն է՝ որ կոչւում է «Երգ Երգոց» (Շիր Հաշիրիմ), այսինքն ամենալաւ երգ: Հարկաւ միայն սուրբ զգացմունքներով պէտքէ կարդալ այդ գրուածքն, որ մեկնութիւնների մէջ վերաբերում է թէ Քրիստոսին և Եկեղեցուն և թէ ամուսիններին: Եթէ չկայ սուրբ զգացմունք, մարդու էութեան համապատասխանող բարեկիրթ զգացմունք, ամենամեծ սրբութիւնն անգամ խաղ կդառնայ:

Այդպէս և ս· Գրիգոր Նարեկացին ասում է իւր համառօտ մեկնութեան մէջ (եր· 393)· «Նաև սուրբ ամուսնութիւն և սէր փեսայի ընդ հարսին և հարսին ընդ փեսային, որ ազատ լինի ի պիղծ խառնից, չէ օտար ի հոգւոյն շնորհաց, որով և խորհուրդն ի Քրիստոս և յեկեղեցի աւարտի »:

«Արդ՝ որ զսուրբ ամուսնութիւն պղծէ

1 Եփես· Ե· 15, 28–32:

1· Կորնթ· ԺԱ· 7:

պէղծ խառնակութեամբ և չար գործովք՝ զեկեղեցւոյ խորհուրդ պղծէ, և զՔրիստոս անարգէ, որ սրբոյ օրինակն է»։

Ըստ որ և նոյն երանելին գովաբանում է Եկեղեցին իւր մի գեղեցիկ գանձի մէջ (եր. 371) հարսանեկան բառերով. «Ուրախ լեր դշխոյ հարսն պանծալի, պսակաւոր, մեծ զարմանուհի, բազմազուարճ կուսութեամբ բերկրեալ։

«Բարուենն լուսոյ հզօր թագաւոր փեսայն երկնաւոր՝ անճառ խորհրդով ի հանդէս խընճոյից պարու կարգեաց քեզ կանոնս անփոփոխելիս»։

Ս. Գրիգոր Տաթևացին մի առ մի բացատրում է պսակի բարձր նշանակութիւնը. նա պարզում է խորհուրդն, ասելով՝ «Խորհուրդ է ծածկեալ իրաց յայտնութիւն.» այսինքն այն գաղտնիքն, որ մենք չենք տեսնում, ներկայանում է մեզ իրական արտայայտութեամբ։ Այդ իրական արտայայտութիւնը մեկնում է նա ասելով իւր «Ամառան քարոզներում» (էջ. 199). «Եւ այս մարմնաւոր հարսանիքս է խորհուրդ հոգևոր հարսանեացն և միաւորութեան Հոգւոյս ընդ Աստուած, որպէս ասէ առաքեալն»։ Ըստ որ և խնամախօսներին նմանեցնում է մարգարէներին, իսկ փեսաւէրներին ու հարսնածուներին նմանեցնում է առաքեալներին և նոյն հետևող հայրերին։ Եւ «Նշան մատանւոյն՝ հաւատն է, որ դնի ի մատն՝ որ է զանազանող գործոյն։» Մատի վրայ է մատանին, սակայն նա ևս ընդարձակ նշանակութիւն ունի.

«Մատանին է ի մատն յայն՝ որ ունի զերակ սրտին. նոյնպէս և հաւատք մի՝ առ Քրիստոս է ջերմ սիրով սրտի հաստատեալ»։ Եւ ինչպէս մատանին օղակ է և ծայր չունի, այնպէս էլ ամուր է ամուսնութեան կապակցութիւնը։ Ոսկի է մատանին զոյգ կապին. ոսկու նման մաքուր պէտք է լինի և երկուսի սէրը։

Հայաստանեայց Եկեղեցին ճանաչելով պըսակի սրբութիւնը, գործնականապէս էլ հակառակութեան մէջ չէ ընկնում՝ արգելելով հոգևորականներին ամուսնանալ. այլ նա սկզբից որոշել է երկու դաս—կուսակրօն և ամուսնացեալ, որով մի որոշ կարգ է դրել իւր պաշտօնեաների մէջ՝ ազատ՝ անհաւաների կամայականութիւններից։ Դորանով սըրբագործում է թէ պսակն և թէ ինքնազոհութեան բարձր առաքինութեան ճանապարհ է թողնում առ այդ կոչուածների համար։

Եւ ինչպէս որ ճշմարտութիւն է աշխարհականների համար թէ «առանց կնոջ աւեր է տունն. և տան շինութիւն կինն է» և «տուն ունիս» ասելով հասկանում են պսակուած լինելը [1], այնպէս էլ կուսակրօն եկեղեցականի համար տունը Եկեղեցին է։

Ը.

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ։

Պսակի ս. խորհուրդ լինելը ցոյց է տալիս արդէն, որ ամուսնութիւնը չի կարող մասնաւոր անհատական նպատակ ունենալ. եթէ այդպէս լինէր, նա չէր համեմատուիլ Քրիստոսին և Եկեղեցուն։ Այլ ինչպէս որ մեծ նշանակութիւն ունի Քրիստոսի և Եկեղեցու կապակցութիւնն Աստուծոյ արքայութեան համար, այնպէս էլ ամուսնական ընտանեկան կեանքը մի անհրաժեշտ տարր է Աստուծոյ արքայութեան իրականացման համար։ Ընտանիքը պէտք է լինի բարոյական աշխարհի փոքրիկ նկարը կամ մանրաշխարհը։

Վերլուծելով ամուսնութեան այդ ընդհանուր նշանակութիւնը, կստանանք ամուսնութեան նպատակի որոշումը։ Կնոջ ստեղծագործութիւնն եղաւ ըստ Աստուծոյ տնօրէնութեան՝ թէ «ոչ է բարւոք մարդոյ միայն լինել, արասցուք դմա օգնական ըստ դմա».[2] Ուրեմն տղամարդի և կնոջ կենակցութիւնը տարր է կազմում Աստուծոյ արարչական տնօրէնութեան։ Քրիստոս եկաւ փրկելու մարդկութիւնն և յաւէժ վարելու

1 Ս. Գ. Տաթևացի, անդ էջ, 197.
2 Ծննդ. Բ. 18.

դէպի Աստուծոյ արքայութիւնը. Նա ինքն առնումէ վերստին այն, ինչ որ ի սկզբանէ հաստատուել էր. սակայն և յիշումէ այն առաքինութիւնն, որ իրագործում են նոքա, «որոնց տուեալ է», որոնք և «են ներքինիք որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն արքայութեան երկնից[1]»: Այսուհետև արդէն ճշտում են ս. Գրիգոր Տաթևացու որոշած երեք նպատակները. մէկ՝ «առ ի խորշելոյ ի պոռնկութենէ,» երկրորդ՝ որդեծնութեան համար. և երրորդ՝ ցանկութիւնք զսպելու և ամոքելու համար:

Լաւ զննելով այդ երեք կէտերը, կտեսնենք որ թէ որդեծնութիւնն և թէ միւս երկու նպատակները միջոց են տալիս մարդուն Աստուծոյ արքայութեան համար գործելու և այդ իրականացնելու: Որչափ հասկանանք տղամարդի և կնոջ կենակցութեան նշանակութիւնն, այնքան սուրբ կպահենք սիրոյ յարաբերութիւնն, որպէս զի օր ըստ օրէ կարողանանք մեր աստուածային կոչման ծառայելու: Մարդու կոչումն է՝ կամ ամուսնական կենակցութեամբ և կամ անձնանուիրութեամբ՝ միջոց գտնել առաւել յաջողութեամբ Աստուծոյ արքայութեան համար գործելու:

Այդ նպատակով նա է միայն դիմում ամուսնական կենակցութեան, ով որ զգում է միայնակ գործելու թուլութիւն և անկարողութիւն և կարօտում է ամուսնական օգնականութեան կամ գործակցութեան: Միայն թէ սուրբ է նպատակը, սրբութեամբ էլ պէտք ձգտել դէպի այն և սուրբ պահել այն ընթացքն, որ տանում է դէպի այդ նպատակը: Որչափ մեղանչէ մարդ այդ կենակցութեան մէջ՝ չկատարելով քրիստոնէական ամենապարզ առաքինութիւններն, որպէս սէր, ներողամտութիւն, պարկեշտութիւն, հեզութիւն, հաւատարմութիւն ևլն, այնքան մեղանչում է նա յիշեալ բարձրագոյն նպատակի դէմ և ինքն ինքեան դատապարտում: Աստուած միացնում է երկուսին և մի մարմին դարձնում, միասին էլ պէտք է գործեն և ապրեն, և ինչպէս «Քրիստոս սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մատնեաց վասն նորա» այնպէս էլ տղամարդը պէտք է սիրէ իւր կնոջ կատարեալ անձնազոհութեամբ, զի «որ սիրէ զկին իւր՝ զանձն իւր սիրէ». իսկ իւր անձն ատողն առաջին մեղապարտն է Աստուծոյ առաջ իբրև Աստուծոյ շնորհն արհամարհող: Նոյն յարաբերութիւնը պէտք պահէ և կինը: Երկուսն էլ իրար ուղղող են և բժշկող: Մի խօսքով տղամարդի և կնոջ յարաբերութեան կատարելատիպը պէտք լինի Քրիստոսի և իւր եկեղեցու յարաբերութիւնն, որպէս զի կարենան վայելել Հայոց եկեղեցու օրհնութեան շնորհները:

Ա. ՏԷՐ-ՄԻՔԵԼԵԱՆ.

(Կը շարունակուի):

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԱՊՐԵԼ ԲԱՐԳԱՒՈՐ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

ԲՆԱԽԱՐՈՒԹԻՒՆ.

Ամէն կողմից ամենաարժանաւոր մարդիկ աշխատասէր, արդարասէր և խիստ ազնիւ մարդիկ են՝ նոքա արժանի են ընդհանուր յարգանքի: Այսպիսի մարդիկներին չէ կարելի չը հաւատալ, չէ կարելի չսիրել, չէ կարելի չցանկալ նոցա նման դառնալ: Նոքա են պահպանում ամէն լաւ և բարի բան աշխարհում և եթէ նոքա չլինէին, ապրել ևս չարժէր:

Ո՛չ ոք պարտաւոր չէ հաւատալ, խելացի

1 Մատթ. ԺԹ. 11, 12: Տես, և Հռ. Է. 8—9. «Բայց ամուրեացն և այրեացն ասեմ. լաւ է նոցա թէ կայցեն իբրև զիս: Ապա թէ ոչ ուժիցին ժոյժ, ամուսնասցին, զի լաւ է ամուսնանալ քան զջեռնուլ:»

կամ գիտնական լինել, բայց ազնիւ մարդ լինել պարտաւոր է իւրաքանչիւրը: Լաւ անուն ունենալու համար անշուշտ պէտք է ունենալ բարի սիրտ, առողջ խելք, համբերութիւն և արդարամտութիւն: Բարութիւնը կերպով իմն անբաժան է խելքի հետ,—սա կենսականի միաւորութիւնն է հոգեկանի հետ: Խելքի և բարութեան միութիւնը շատ բանի մէջ է երևում: Մենք շատ անգամ տեսնում ենք, որ խելքը մարդուն բարի է դարձնում և բարութիւնը շատ անգամ փոխարինում է խելքը:

Բնաւորութիւնը կազմւում է, զանազան մինչև անգամ ամենամանր, հանգամանքների ազդեցութիւնից:

Օր չէ անցնում, որ մարդս չսովորէ որևիցէ լաւ կամ վատ բան, բայց իւր մէջ լաւ բնաւորութիւն մշակելն առանց աշխատութեան և ջանքերի՝ ոչ ոք չէ կարող: Շատ անգամ կըպատահին գժուարութիւններ և փորձութիւններ, որոնց դէմ կարևոր է անշուշտ մաքառել նոցա յաղթելու համար: Բայց հոգով հզօր և ազնիւ մարդը պիտի չյուսահատէ, այլ հաստատապէս պիտի յուսայ յաջողութեան վրայ:

Առաւել բարի և ազնիւ դառնալու նոյն իսկ ցանկութիւնն ոգևորում է և հզօրացնում է մեզ, և մենք լաւագոյն ենք դառնում ամեն անգամ, երբ ազնիւ ջանք ենք անում ցանկալի նպատակին հասնելու:

ԸՆՏԱՆԻՔԻ, ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՕՐԻՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ.

Ընտանիքն առաջին և ամենագլխաւոր դըպրոցն է, ուր կազմակերպւում է մարդու բնաւորութիւնը: Ընտանիքի մէջ է ստանում մարդն իւր առաջին բարոյական կրթութիւնը: Նորա միջից է քաղում իւր ամբողջ կեանքի համար վարուելու կանոնները, ահա թէ ինչի մի լաւ մայրը արժէ հարիւրաւոր դպրոցական ուսուցիչներ:

Ամենաղքատ բնակարանը, եթէ նորա կարգադրողը բարի, հոգատար, ուրախ և մաքրասէր կին է, կարող է դառնալ քաղցր և խաղաղ բարեբաղդութեամբ լի անկիւն: Այս թանկագին կդառնայ մարդու համար անցեալի յիշատակութիւններով, սրտի համար ապաստան կդառնայ կեանքի փոթորիկներից և աղմուկներից հանգիստ առնելու, խաղաղ օթևան կլինի աշխատութիւնից յետոյ, մխիթարութիւն կլինի անբաղդութեան մէջ, և ուրախութիւն ամեն ժամանակ: Այսպէսով խաղաղ ընտանեկան շրջանը լաւագոյն դպրոց է, ոչ միայն երիտասարդ, այլ և հասուն հասակում:

Կասկած չկայ, որ բանականութիւնը տրուած է նոյնպէս կանանց, ինչպէս տղամարդիկներին նորա համար, որ նոքա օգուտ քաղեն նորանից և գործադրեն նորան և ոչ թէ նորա համար, որ նա բթանայ անգործադրութիւնից:

Կնոջ խելքը և բնաւորութիւնը մշակուած պիտի լինին նոյնքան իր սեփական, որքան և ուրիշների բաղդաւորութեան համար: Նոյն իսկ տղամարդիկ ոչ առողջ դատողութիւն, ոչ բարի բարք կունենան, եթէ կանայք հակառակն ունին:

Ընտանեկան կեանքից նուազ ազդեցութիւն չունին մարդու բնաւորութեան վրայ՝ ընկերակցութիւնը և օրինակները: Ուստի պէտք է աշխատել բարեկամութիւն կապել բարի և ազնիւ մարդիկների հետ, նոցանից միայն բարի բան սովորելու համար:

Անառակ մարդիկների հետ ընկերակցութիւնն ապականուած ճաշակի և արատաւոր ձգտմունքի նշան է: Նոցա ընկերութիւն յաճախելն անկասկած բնաւորութեան խանգարման կհասցնէ: Ուստի բարեմիտ և բարեխիղճ երիտասարդները միշտ լաւ և ազնիւ մարդիկների ընկերութիւն պիտի որոնեն և նոցա նըմանել պիտի աշխատեն:

Ընդհանրապէս նոյն իսկ մեզանից աւելի խելացի և աւելի փորձառու մարդիկների ընկերութիւնը մեր վրայ միշտ լաւ ազդեցութիւն ունի: Նոցա միջոցով մենք աւելի մօտ ենք ծանօթանում կեանքի հետ: Մենք օգուտ ենք քաղում նոցա փորձառութիւնից և հը-

րահանգւում ենք, ծանօթանալով ոչ միայն ինչ որ նոցա կեանքի բաղդաւորութիւն և ուրախութիւնն էր, այլ և նոցա կրած տանջանքի հետ։ Ահա թէ ինչի խելացի և եռանդուն մարդիկների հետ բարեկամութիւնն և ընկերակցութիւնը չեն կարող մեծ ազդեցութիւն չունենալ մեր բնաւորութեան վրայ։ Այսպիսի բարեկամութիւնն ամրացնում է մեզ մեր բարի դիտաւորութիւնների մէջ և սովորեցնում է մեզ օգտաւէտ կեանք վարել թէ մեզ և թէ ուրիշների համար։

Մարդու բնաւորութիւնն յայտնւում է կեանքի ամեն հանգամանքներում։ Արհեստաւոր դասի մէջ անգամ լաւ բնաւորութեան տէր մարդը կարող է լաւ ուղղութիւն տալ իւր ընկերակիցներին և բարոյապէս բարձրացնել նոցա։

Այսպէս Ֆրանկլինը, Լօնդօնում արհեստաւոր լինելով, իւր արթուն և ազնիւ կեանքի օրինակով ամբողջ ընկերութեան բարքն ուղղեց։ Փոքր առ փոքր նորա ընկերները դադարեցին տօն օրերը վատնելով և արբելով անցուցանել, սկսեցին դրամ ժողովել սև օրի համար, մաքուր և չպատռտած հագուստ ունենալ, կիրակի օրերն եկեղեցի գնալ, լաւ և օգտաւէտ գրքեր կարդալ, իրանց զաւակների կրթութեան և իրանց ընտանիքի պէտքերին հոգալ, մի խօսքով սկսեցին թէ գործարանում և թէ տանը, արթուն և ազնիւ կեանք վարել։

Իւրաքանչիւր մարդու ամենօրեայ կեանքը ուրիշների համար օգտաւէտ կամ վնասակար օրինակներ է ներկայացնում։ Օրինաւոր մարդու կեանքն առաքինութեան ամենալաւ դաս է և արատների ամենախիստ յանդիմանութիւն։

Դօկտօր Հուկէր իւր ծանօթ բարեպաշտ մի քահանայի կեանքը կենդանի քարոզ է անուանում, որը կարող է ամենարատաւոր մարդիկներին անգամ համոզել թէ առաքինութիւնը գեղեցիկ է։

Բարի Հէրբէրտ, իւր հովուական պարտքերը կատարել սկսելիս, ասաց. ամենից աւելի ես ցանկանում եմ համոզուած լինել, որ ինքս ազնիւ և լաւ կեանք եմ վարում, Աստուծու խօսքին համաձայն, որովհետև քահանայի բարեգործ կեանքը ամենալաւ միջոց է ժողովրդի մէջ սէր և յարգանք յարուցանելու դէպի քահանան, նոյն իսկ նորան նմանելու ցանկութիւն։ Եւ ես սորան կհասնեմ, օգնութեամբ Տեառն, յարակցեց նա, որովհետև այն դարն, որի մէջ ապրում ենք, առաւելապէս լաւ օրինակների մեծ պէտք և կարիք ունի քան թէ խրատների։

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ, ՔԱՋՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՆՔՆԱԶՍՊՈՒՄՆ.

Աշխատիր իբրև թէ յաւիտեան պիտի ապրես,
Աղօթիր իբրև թէ այսօր և եթ պիտի մեռնես.

Առանց աշխատութեան ոչինչ չէ կարելի ձեռք բերել։ Ինչ որ լաւ և վսեմ բան կայ մարդու մէջ, աշխատութեամբ է ստացւում։ Ոչ թէ աշխատութիւնը, այլ պարապութիւնն է կործանում մարդուն։ Ծուլութիւնն այնպէս է մաշում սիրտը, ինչպէս որ ժանգը ուտում է երկաթը։ Ծուլութիւնը միակերպ ստորացնում է թէ անհատներին և թէ ամբողջ ազգեր, ծոյլ մարդիկն երբէք ոչինչ լաւ բան չեն արած և երբէք ոչինչ անելու չեն։ Ծոյլերը միշտ անյաջողութիւններին էին հանդիպում և միշտ պիտի հանդիպեն. նոքա երբէք առաջադէմ գործ չեն կատարած։ Ծոյլերը վնասակար, անօգուտ, միշտ գանգատող, ձանձրացող և անբաղդ մարդիկ են։ Նոքա ոչ երբէք և ոչնչով գոհ չեն լինում, երբէք առողջ չեն լինում ոչ մարմնով, ոչ հոգով։

Ծուլութիւնն ամեն չարիքի աղբիւր է, ամենարատների մայր է, եօթ մահացու մեղքերից մին է։ Որքան մարդիկ գող և աւազակ են դարձել միայն նորանից, որ ծուլանում էին իրանց հացը աշխատութեամբ հայթայթելու։ Քրիստոնէութեան առաջին առաքեալները ցոյց տուին մեզ աշխատութեան օրինակ։ Պօղոս առաքեալը պարծենում էր նորանով, որ աշխատում էր իւր ձեռներով և երբէք ոչ ոքին ծանրութիւն չէ եղել։ Բոնիֆացիոս

գնաց Անգլիա քրիստոնէական կրօնը քարոզելու մի ձեռին աւետարան և միւս ձեռին հիւանի գործիքներ ունենալով: Անգլիայից նա վերջը Գերմանիա գնաց, որտեղ ժողովրդին կառուցանելու արհեստ սովորեցրեց:

Անդադար և միևնոյն ժամանակ օգտաւէտ պարապմունքի սովորութիւնը անհրաժեշտ պայման է թէ տղամարդիկների և թէ կանանց համար և լաւագոյն միջոց է ձանձրոյթ չզգալու: Այն մարդու համար, որը սովորած է բոլոր կեանքը օգտաւէտ պարապմունքով անցուցանել, իւրաքանչիւր րոպէն նշանակութիւն ունի, և երբ ազատ ժամանակ պատահի, նորանից օգուտ է քաղում վայելչութեամբ:

Յաջողութեան յուսով աշխատել, օգտաւէտ զբաղմունք գտնել—ահա այս է բաղդաւոր լինելու լաւագոյն միջոցներից մին:

Մարդու քաջութիւնն այն ժամանակ է երևում, երբ ըռելեայն ստիպում է իրան համբերութեամբ տանելու ամենայն չարչարանքներ պարտքի և խղճմտանքի համար: „Ես աւելի յօժարութեամբ կհամաձայնեմ վնասուելու արդարութիւնն յայտնելով, ասում էր մի յայտնի անգլիացի, քան թէ իմանամ, որ արդարութիւնը կվնասուի իմ լռութիւնից“:

Ճշմարիտ քաջութիւնը չէ արգելում մարդուն բարի լինելու: Ընդհակառակն, մենք յաճախ տեսնում ենք, որ բոլորովին քաջ մարդիկ շատ մեղմ և հեզ բնաւորութիւն ունին: Օրինակ Նէպիրը, որը Անգլիայի պատերազմի միջոցին Իսպանիայի դէմ քաջութեան հրաշքներ արեց, երբէք որսի չէր գնում, որովհետև անբան կենդանին խլուր սպանելու միտքն անգամ անտանելի էր նորա համար: Յետոյ Լիւտերը, կրօնի համար մահն յանձն առնելու, ամենասաստիկ չարչարանքներ կրելու պատրաստ մարդը, սիրում էր մանուկներին, ծաղիկներ և երաժշտութիւն: Նորա եռանդը և քաջութիւնը չէին արգելում նորան կնոջ պէս բարի, քնքոյշ սիրտ ունենալու:

Քաջ և արի տղամարդը վեհանձն է և ամեն դէպքում ազնուաբար է ներգործում: Նա օգուտ չի քաղի մինչև անգամ իւր թշնամու նեղ դրութիւնից, չի յարձակուի այն մարդու վրայ, որը պաշտպանուելու ոյժ չունի: Վեհանձնութեան այսպիսի օրինակները պատահում են պատերազմի միջոցին ևս: Օրինակ, Դեօտտինգէնի մօտ եղած ճակատամարտում ֆրանսական հեծելագունդը յարձակուեցաւ անգլիական զօրքի վրա: Հեծելագնդի գլուխ կանգնած ֆրանսական երիտասարդ սպան կամենում էր ընկնել անգլիական զօրապետի վրայ, բայց երբ նկատեց, որ նա միայն մի ձեռք ունէր, որով բռնած էր իւր ձիու սանձը, ֆրանսացին քաղաքավարութեամբ յարգանք մատոյց նորան իւր թրով և առաջ գնաց:

Ահա դարձեալ ֆրանսական բանւորի գերօրինակ արիութեան և անձնուիրութեան մի դէպք: Այս դէպքը Փարիզում պատահեց: Շատ բարձր, բայց դեռ բոլորովին չվերջացած տան շուրջը փայտամածներ կային, որտեղ աշխատում էին բանւորներ: Փայտամածներն ամուր չէին և յանկարծ քանդուեցան և նորա վրայ գտնուող բոլոր մարդիկ թափուեցան բարձրից գետին՝ բացի երկուսից — մի պատանի և մի միջին տարիքով մարդ: Նոքա երկուքեան բռնած էին ներսի տախտակի դուրս ընկած փոքրիկ ծայրից, որն արդէն ծալուում էր կախ ընկածների ծանրութիւնից և մօտ էր կոտրուելուն:—Պետրոս, գոչեց աւելի հասակաւորն, բաց թող տախտակը, մի՛ բռնիր, միտքդ բեր, որ ես հայր եմ, ընտանիք ունիմ:— Այո ճշմարիտ է, պատասխանեց Պետրոսը, և բաց թողեց տախտակը, ընկաւ սալայատակի վրայ և մեռաւ, բայց փրկեց ընտանիքի հօրը:

Անկասկածելի է, որ մարդս կարող է իրան վարժեցնել երկիւղի զգացմունքին չենթարկուելու, ինչպէս որ կարող է սովորել ուշադիր, աշխատասէր, բարի և ուրախ լինել:

Կանայք տղամարդիկներից պակաս արիութիւն և եռանդ չունին, թէպէտ նոցա աւելի քիչ են պատահում այս յատկութիւնները ցոյց տալու դէպքերը: Ոչ ոք կանանց պէս համբերութեամբ և արիութեամբ չէ տանում

տրամութիւնը և հիւանդութիւնը: Փորձով ապացուցուած է, որ նոքա ընդունակ են դիմանալու ամենածանր փորձութիւններին և թշուառութիւններին բոլորովին նոյն արիութեամբ, ինչպէս և տղամարդիկը, և մենք շատ ենք տեսնում այնպիսի կանանց, որոնք տանում են ամենադժուար հիւանդութիւններ առանց որևիցէ գանգատների և տրտունջի:

Կանայքն առաւելապէս ցոյց են տալիս իրանց արիութիւնը և անսահման հաւատարմութիւնը դէպի պարտքը գթութեան և բարերարութեան գործերում: Ամենքին յայտնի է թէ ինչ աներկիւղ համարձակութեամբ գթութեան քոյրերը գինուորների վէրքեր են կապում նոյն իսկ պատերազմի դաշտում թշնամիների գնդակների կարկուտների տակ: Շատ անգամ նոքա վէրքեր են ստացել իրանց մարդասիրական պարտքեր կատարելիս: Ո՞վ չէ լսած Լօնդօնում միկին Կարպէնտէրի և տ. Սարա Մարտէնի—բանտերի այս եռանդոտ և անվաստակ այցելուների և վերանորոգիչների անունները:

Սարա Մարտէնը որբ էր մնացել մանկութիւնից և կրթւում էր իւր մեծ մօր մօտ: Նա շատ բարի էր և բարեպաշտ, և մի նպատակ միայն ունէր—ըստ կարելոյն թշուառներին օգնել: Թէև ևս օրիորդ լինելով, նա յաճախ մտածում էր յանցաւորների, բանտարկուածների տխուր դրութեան մասին: Այս անբաղդները, մեղքերին և անառակութեան մատնուածներին, ամենքից արհամարհուած և ձգուած, նորա խորին ցաւակցութիւնն էին շարժում, և նա վերջը վճռեց բոլոր իւր կեանքը նոցա սովորեցնելուն և ուղղելուն նուիրել: Բանտն այցելելու թոյլտուութիւն ձեռք բերելով նա սկսեց ամեն օր քանի մի ժամ բանտարկուածների հետ անցուցանել, կարդում էր նոցա՝ Աւետարանը, սովորեցնում էր նոցա կարդալ և գրել, իսկ կանանց բացի սորանից սովորեցնում էր գործել, կարել և ձևել: Բանտում պատրաստած իրերի վաճառումից գոյացած դրամով նա գնում էր նոր նիւթեր՝ արհեստներ սովորեցնել շարունակելու համար: Տղամարդկններին նա սովորեցնում էր յարդեայ գլխարկներ հիւսել, այրական և մանկական գլխարկներ կարել, մինչև անգամ կարկատել, մի խօսքով աշխատում էր նոցա մի բանով զբաղեցնել, որ նոքա պարապ չմնային, իրանց մեղքերին անձնատուր չլինէին: Այսպէս նա բանտը մի տեսակ փեթակ դարձրեց, որտեղ ամենքը մեղուների պէս աշխատում էին: Նոր մտած կալանաւորներն երբեմն ընդդիմանում էին նորան; Սակայն իւր անփոփոխ հեզութեամբ նա կարողանում էր իրան յարգել տալ նոցա և ուրիշների հետ աշխատեցնել:

Յանցանքների մէջ յամառած ծեր մարդիկ, Լօնդօնի ճարպիկ գողեր, ապականուած տղաներ, անառակ ծովակալներ, վատաբարոյ կանայք, մի խօսքով այն բազմադոյն բազմութիւնը, որը սովորաբար մեծ քաղաքի բանտերն է լցնում, ենթարկւում էր այս բարի կնոջ բարեգործ ազդեցութեանը: Նորա հրակողութեամբ բանտարկուածներից շատերն իրանց կեանքում առաջին անգամ էին առնում գիրքը ձեռին կամ սովորում այբուբեն արժանաւորին այբբենարանով: Սարան ձեռք բերեց նոցա վստահութիւնը, հսկում էր նոցա, աղօթում էր և լալիս էր նոցա հետ, համակրելով նոցանից իւրաքանչիւրին: Նա զարթեցնում էր նոցա մէջ բարի զգացմունքները, քաջալերում էր յուսահատածներին, ամենքին ուղղուելու ճանապարհն էր ցոյց տալիս և օգնում էր նոցա նոր ճանապարհի վրա: Բանտարկուածների բանտից դուրս գալուց յետոյ ևս, նա չէր դադարում նոցա մասին հոգալուց: Նոցա աշխատած դրամներից նա փոքր դրամագլուխ կազմեց, որը գործ էր դնում ազատուածներին գործ գտնելու, այսպէս օգնելով նոցա ազնուաբար նոր-կեանք սկսելու:

Քաջութեան ուրիշ տեսակն ևս կայ, որը նոյնչափ անհրաժեշտ կարևոր է կեանքում, այն է ինքնազսպումն կամ սեփական անձին իշխելը:

Այն մարդը, որը չգիտէ իւր ցանկութիւններին դիմադրել իւր կիրքերի ստրուկ է, դառնում:

Բարոյապէս ազատ լինելու համար, անբան կենդանուց բարձր կանգնելու համար, մարդս ոյժ պիտի ունենայ իւր ցանկութիւնների և հակմունքի դէմ պատերազմելու, եթէ նոքա կարող են վնասել իրան կամ ուրիշներին, իսկ այսպիսի ոյժը ձեռք է բերւում միայն ինքնազսպման անդադար վարժութեամբ: Այս ոյժի մէջ է ահա մարդու գլխաւոր գերազանցութիւնը կենդանուց:

Այսպէս օրինակ Հանրի Մարտին քարոզիչը, որ յայտնի է, իւր հեզութեամբ և համբերութեամբ, մանկութեան ժամանակ անհամբեր, բարկացկոտ և չար էր: Սակայն իւր վատ հակմունքի դէմ շարունակ մաքառելով, նա կարողացաւ վերջապէս յաղթել նոցա և դառնալ այն, ինչ որ խիստ ցանկանում էր լինել, այն է բարի և համբերող մարդ:

Պ Ա Ր Տ .Բ.

Պարտքը լցնում է մարդու ամբողջ կեանքը: Նա սկսւում է ընտանիքի մէջ: Այր և կին պարտք ունին միմեանց սիրելու և յարգելու, բաժանելով իրանց մէջ ուրախութիւններ, վշտեր և հոգսեր և օգնելով միմեանց ամեն բանի մէջ: Մանուկները պարտք ունին սիրելու, պատուելու և լսելու իրանց ծնողներին և մտածելու, որ ժամանակով իրանք պիտի դառնան նոցա մխիթարութիւն և նեցուկ, իսկ ծնողներն իրանց կողմից պարտք ունին անդադար հոգալու, որ զաւակներին զարգացնեն լաւ, ազնիւ և բաղդաւոր մարդիկ դառնալու, իրանց և ուրիշներին օգտաւէտ լինելու:

Սորա համար կարևոր է մանուկների հակմունք դիտել և ամեն կերպով աշխատել նոցա արատներն արմատախիլ անել ամենափոքրը մանկութիւնից: Իսկ գլխաւորապէս ծնողների պարտքն է ոչնչացնել մանուկների մէջ հետևեալ արատներն, որոնք միւս արատներից աւելի են արգելում մարդիկներին բաղդաւոր և օգտաւէտ լինելու, նախ — նախանձ: Նախանձոտ մարդն երբէք և ոչինչ հանգամանքներում չէ կարող բաղդաւոր լինել, միևնոյն է, հարուստ է թէ աղքատ, խելացի է թէ յիմար, գեղեցիկ է, թէ տգեղ, որովհետև չկայ այնպիսի մարդ, որը չհանդիպէր իւր կեանքի մէջ իրանից աւելի հարուստ, խելացի կամ գեղեցիկ մարդու:

Իւր դրութիւնն անդադար համեմատել այն մարդիկների դրութեան հետ, որոնք մեզանից աւելի բաղդաւոր կամ հարուստ են — սա հաստատ միջոց է, երբէք և ոչնչից գոհ չլինելու: Բայց եթէ մենք յաճախագոյն համեմատենք մեր դրութիւնը մեզանից աւելի չունևոր և անբաղդ մարդիկների դրութեան հետ, կտեսնենք, որ մեզ մնում է միայն գոհանալ Աստուծուց և օգուտ քաղելն իմանալ նորանից, ինչ որ տուել է նա մեզ և ոչ թէ նախանձել նոցա, որոնց Աստուած աւելի է տուել: Արժէ միայն մտածել, որ լինում են այնպիսի սարսափելի հիւանդութիւններ և սկարութիւններ, որոնց միջոցում ոչինչ հարստութիւն չէ կարող ուրախացնել, պէտք է յիշել կոյրերին, համրերին, կաղերին, սապատողներին, որ հասկանանք թէ որքան բաղդաւորութիւն է քաջ առողջութիւն և լաւ տեսողութիւն ունենալ: Նա, որը դադարում է հաւանել իւր սեփական տունը և պարտէզը այն պատճառով միայն, որ դրացին առաւել լաւ տուն և առաւել մեծ պարտէզ ունի — նա երբէք չէ կարող բաղդաւոր լինել:

Երկրորդ արատն եսականութիւնն է: Այն մարդը, որ սովորել է մանկութիւնից մտածել միայն իւր մասին, և թէ ինքն միայն լաւ լինէր, չէ հասկանում, որ իրան զրկում է լաւագոյն վայելչութիւնից կեանքի մէջ, այսինքն այն վայելչութիւնից, որ ստանում է մարդս ուրիշներին հաճելի լինելուց:

Եսասէր մարդուն ոչ ոք չէ սիրում և նորա բոլոր շրջապատողները նոյնպէս սկսում են սակաւ հոգալ նորա մասին, ինչպէս նա ինքն սակաւ է հոգում ուրիշների մասին, մինչդեռ բարի մարդուն, որն աշխատում է, ըստ հնարաւորութեան ամենին հաճելի բան անելու, իւրաքանչիւրը սիրում է, և իւրաքանչիւրն իւր կողմից ուրախ է, նորան մի ծառայութիւն անելու:

Երրորդ արատը ծուլութիւնն է: Ջանձրոյթը մեր կեանքի անտանելի տանջանքներից մին է: Սա մի տեսակ հիւանդութիւն է: Բայց ո՞վ է ամենքից աւելի ձանձրանում: Ի հարկէ ծոյլ մարդիկ: Ծուլութիւնից ծոյլ մարդու գլուխն այնպիսի վատ և տխուր մտքեր են գալիս, որոնք աշխատող մարդն երազում էլ չէ տեսնում: Այս դեռ քիչ է. ծոյլ մարդը պարապութիւնից շատ անգամ արբեցութեան և ուրիշ արատներին է անձնատուր լինում և սորանից երբեմն կատարելապէս վնասւում է և աղքատանում, մինչդեռ կարող էր վայելուչ և անկարօտ կերպով ապրել եթէ միայն կամենար իւր ծուլութեան յաղթել և գործ սկսել: Աշխատասէր մարդու գիտակցութիւնը թէ նա ի զուր չէ ապրում աշխարհումս, իրան և ուրիշներին օգուտ տալով, շատ է նպաստում նորա բաղդաւորութեանը:

Անկասկած հասակաւոր մարդն էլ կարող է թողնել այս արատները, եթէ նա հաստատ կվճռէ ուղղուել, բայց մանուկի համար այս անհամեմատ աւելի հեշտ է: Ահա թէ ինչի ծնողների սրբազան պարտքն է՝ իրանց զաւակներին լաւ, կանոնաւոր կրթութիւն տալ:

Բացի ընտանեկան պարտքերից մարդը դարձեալ պարտքեր ունի հասարակութեան վերաբերմամբ: Իւրաքանչիւր թէ աղքատ և թէ հարուստ մարդու պարտքն է աշխատել որքան կարելի է հասարակութեան օգտաւէտ անդամ լինելու: Իսկ ընկերներին օգուտ տալու միջոցները շատ են: Օրինակ շահաւէտ արհեստ սովորեցնել, բարի խորհուրդ տալ, հարկաւոր միջոցում անգրագէտին կարդալ և գրել սովորեցնել և այլն: Յայտնի Սըն Պիէր կրօնաւորը մարդկութեան յաւիտենական երախտագիտութեան արժանացաւ նորանով, որ առաջինն տուեց արհեստական դպրոցներ բանալու միտքն աղքատ մանուկների համար, որտեղ նոքա ոչ միայն կարդալ և գրել են սովորում հապա և զանազան արհեստներ, որոնց միջոցով հասակն առնելուց յետոյ հնար ունին ազնուաբար իրանց ապրուստը հայթայթելու:

Այս կերպով պարտքը լցնում է բոլոր մեր կեանքը, կեանքի մէջ մտնելու րոպէից սկսած մինչև մահը. պարտքը առաջինների վերաբերմամբ, պարտքը կրտսերների վերաբերմամբ, պարտքը հաւասարների վերաբերմամբ, առհասարակ մարդու պարտքը դէպի մարդ և դէպի Աստուած: Աստուած մեր վրայ պարտք է դրել օգուտ քաղելու այն ամենից, ինչ որ նա մեզ տուել է թէ մեր սեփական և թէ մեր ընկերների բաղդաւորութեան համար: Պարտաճանաչութիւնը մի ոյժ է, որը քաջ մարդուն էլ քաջալերում է: Պարտաճանաչութիւնն ոգու վեհութիւն է մեծացնում: Երբ Պոմպէոսի բարեկամներն սկսեցին համոզել նորան Հռոմից չգնալ փոթորկի միջոցին, իւր կեանքը վտանգին չենթարկելու համար, նա վեհանձնութեամբ պատասխանեց թէ՝ „Գնալը նորա պարտքն է, իսկ ապրելը նորա պարտք չէ“: Եւ նա կատարեց այն, ինչ որ իւր պարտքն էր համարում, ուշք չդարձնելով վտանգին, փոթորկին արհամարհելով:

Պարտքի այսպիսի վսեմ գաղափարն անգլիացի յայտնի Վէլլինգտօն զօրավարի բնաւորոյթի գլխաւոր յատկութիւնն էր: Վատէրլօյի ճակատամարտի մէջ նա իւր զինուորներին ասաց. „Հաստատ կացէք, զինուորներ, յիշեցէք թէ ինչ կասեն մեր մասին Անգլիայում“: Զինուորները նորան պատասխանեցին. „Հանգիստ եղէք, տէր, մենք մեր պարտքը գիտենք“:

Անգլիացի Նէլսօն ծովապետը նոյնպէս քաջ գիտէր իւր պարտքը: Սորա ապացոյցը նորա խօսքերն են, որով նա դարձաւ նաւաստիներին Տրաֆալգարի ճակատամարտից առաջ. “Անգլիան մեր իւրաքանչիւրից իւր պարտք կատարելն է սպասում“, նոյնպէս և նորա վերջին խօսքերը մահից առաջ. „Ես իմ պարտքըս կատարեցի և սորա համար գոհանում եմ Աստուծուց“: Այսպիսի խորին պարտաճանաչութիւնը թէ մասնաւոր մարդու և թէ ամբողջ ժողովրդի կողմից մեծ գործ է:

Այն ազգը, որի մէջ պարտաճանաչութիւնը մեծ է, ոչինչ ժամանակաւոր աղէտների

միջոցում չպիտի յուսահատի իւր ապագայի մասին: Բայց վայ այն ազգին, որի մէջ պարտաճանաչութիւնն ոչնչացել է. նա մօտ է կորստին:

Բ Ա Ր Ք.

Արդէն ասացինք, որ կեանքի մէջ յաջողութեան գլխաւոր պայմաններից մին հեզաբարոյութիւնն է:

Մարդու բաղդաւորութիւնը կախումն ունի գլխաւորապէս իւր համբերութիւնից, տոկունութիւնից, բարութիւնից, ոգու հարթ տրամադրութիւնից և ընկերների բաղդաւորութեան մասին ունեցած հոգատարութիւնից: Պղատոնի խօսքերը թէ ուրիշների բաղդաւորութեան մասին աշխատելով, մեր սեփական բաղդաւորութիւնն ենք պատրաստում, բոլորովին ճշմարիտ են:

Կան այնպիսի բաղդաւոր բնաւորութիւններ, որոնք միշտ և ամէն բանում կարողանում են լաւ կողմ գտնել: Չկայ այնպիսի մի չարիք, որից նոքա մխիթարական և հանգստացնող միտք դուրս չբերէին: Չկայ այնպիսի մի մութ ամպ, որի միջից նոցա համար գոնէ մի թոյլ արեգակնային ճառագայթ չըփայլէր: Այսպիսի բաղդաւոր բնաւորոյթով օժտուած մարդիկն արդարև արժանի են նըմանողներ ունենալու: Նոցա հոգին լցուած է կարծես արեգակի լոյսով և այս լոյսը սփռւում է նոցա ամբողջ շրջապատի վրայ: Եթէ նոցա էլ վիճակուած է լինում խաչը կրել, նոքա կրում են նորան անտրտունջ, առանց անձկութեան, առանց վատնելու իրանց ոյժերը անօգուտ արտասուքներով և գանգատներով, արիաբար առաջ են գնում փշերի միջով, հարևանցի քաղելով իրանց ճանապարհին պատահած ծաղիկները:

Թէպէտ ոգու ուրախ տրամադրութիւնը մեծ մասամբ բնածին է լինում, այնուամենայնիւ կարելի է նորան ձեռք բերել և կրթել մարդու մէջ, ինչպէս ամենայն սովորութիւն: Կեանքը մենք կարող ենք ամենալաւ կամ ամենավատ կերպով գործադրել: Կեանքը միշտ երկու կողմ ունի և մեզանից է կախուած լաւ թէ վատ կողմին նայել: Չէ կարելի բաղդին սպասել, անգործ նստած, հարկաւոր է նորա ընդառաջ գնալ, աշխատութեամբ նորան ձեռք բերել: Ամենալայն բնոյթներ լինում են սովորաբար ամենաբարի, սիրող, հաւատացող, հաստատուն յոյս և ակնկալութիւն տածող:

Ոգու զուարթ և ուրախ տրամադրութիւնն ոչ միայն ուրախութիւնների հարուստ աղբիւր է, այլև միևնոյն ժամանակ հզօր նեցուկ է բնաւորոյթի համար: Մի շատ բարեպաշտ մատենագրից հարցրին թէ, ինչպէս է յաղթում նա փորձառութիւններին, նա պատասխանեց. „հոգու ուրախ տրամադրութեամբ“: Ուրախ բարքը գերազանց և շատ օգտաւէտ յատկութիւն է ամենօրեայ կեանքի համար: Մի ոմն այսպիսի տրամադրութիւնն „հոգու պայծառ եղանակ“ անուանեց: Արդարև զուարթութիւնը հանգստութիւն է փոխարինում, զուարթութիւնը մի տեսակ մըշտընջենական երգ է առանց բառերի: Զուարթութիւնը մարդուն ոյժ և սիրտ է տալիս, մինչդեռ արտասուքներ և անձկութիւն վատակարբեկ են անում և թուլացնում են նորան:

Սէրը, յոյսը և համբերութիւնը — ահա զուարթութեան իսկական աղբիւրներ:

Սէրը մարդուն զիջող և բարեմիտ կարծիք է ներշնչում մերձաւորների մասին: Սէրը կարեկից է, բարի է և հաստատուն: Սէրը միշտ աշխատում է տեսնել մարդիկների և կեանքի միայն լաւագոյն կողմը: Նա հաստատում է մարդուն բարի մտադրութիւնների մէջ և իւր շուրջ ուրախութիւնն և բաղդաւորութիւնն է սփռում: Սէրը և բարութիւնը ոսկու քաշով չեն ձեռք բերւում, սակայն իբրև շնորհի և ուրախութեան աղբիւր անգնահատելի են:

Նոյն իսկ մեզանից է կախուած նայել կեանքի պայծառ կամ մութ կողմին: Շատ դէպքերում իւրաքանչիւրիս համար կեանքն այն է, ինչ որ մենք ինքներս նորան կդարձնենք:

Ջուարթ և ուրախ մարդիկն աշխարհիս խակական տիրողներ են, որովհետև աշխարհը նոցա է պատկանում, ով գիտէ նորան վայելել:

ԽՈՐԷՆ Ծ. Վ. ՍՏԵՓԱՆԷ.

(Շարունակելի).

ԽՂՃԻ ԴԵՐԸ.

(Թարգմանած Недѣля ամսագրի № 11 93 թ.)

Վեհ և բարձր հոգին արհամարհում է ամէն ինչ՝ որպէս-զի ամէն բան ընդգրկէ:

Մարդավարութեան օրէնք է, որ իւրաքանչիւր մարդ՝ առանց չափելու նրա զարգացման աստիճանը՝ իրաւունք ունի իր մտածմունքները և դատողութիւնները հաղորդել հասարակութեան՝ մարդ-եղբայրներին և հասարակութիւնը բարեհաճ և համբերատար ուշադրութեամբ լսում է իր անդամին, օգտւում է նրա խելօք մտքերից, իսկ անհիմն խօսքերը թողնում է առանց ուշադրութեան: Այդտեղ ազատաբար խիղճը կատարում է իր դերը, վասն զի տիրող վեհ և բարձր հոգին չի խրտչում մանր մունր բաներից և թոյլ է տալիս ամէն մտքի պարզաբար արտայայտուելու. խիղճը և միտքը ամենամօտ առնչութիւն ունին իրար հետ:

Իսկ մեր մէջ որպէս մի խիստ ազէտ հասարակութեան մէջ՝ բռնաբարւում է, միտքը, բռնաբարւում է խղճի ձայնը կուսակցական շահերի համար: Եւ ահա երբ երևում է մի վեհ հոգի՝ մի մեծ մարդ, որով այնքան աղքատ է մեր կեանքը, մի բարձր հոգի, կրկնում եմ, որ ընդունակ է իր կեանքի մի մասը մեզ նուիրելու, հասարակութիւնը անխտիր կերպով պատրաստ է, մեզ թւում է, պատկառելի ուշադրութիւն նուիրել նրան, ջանալով թափանցել նրա մեծ հոգին և իւրացնել նրա վեհութիւնը, լայնարձակ համբերութիւնը և հաշտ ընկերական բարեհաճութիւնը:

Ով կուզէ լինի մեծ մարդը՝ նա ժողովրդական նուիրական սեպհականութիւնն է, հասարակութիւնը պատասխանատու է, նրա համար պատմութեան առաջ: Նրան պատճառած վիշտըն ու ցաւը կը ծանրանայ և սև բծի պէս կը դրոշմուի մեր խղճի վերայ: Կարող էք չըհնազանդել մեծ խօսքին, եթէ ձեր խելքը և խիղճն այդ արգելում են, բայց նախ և առաջ լաւ քննեցէք և համոզուեցէք՝ չը լինի թէ անխելքութիւնը և անխղճութիւնն են թելադրում այդ ձեզ:

Իմացէք, որ մեծ հոգու տէր՝ քանքար ունեցող մարդու համար դէթ ճշմարտութեան կէսը մատչելի է, իսկ հասարակ մահկանացուների համար մատչելի չէ նրա ոչ իսկ հարիւրերորդ մասը. բացի դրանից՝ նա ունի ահագին խելք. նա միշտ տալիս է իւր սեպհականը և տալիս է անկեղծաբար. և դրանք են իսկական հանճարի նշանները: Ինչ միտք էլ որ նա չը յայտնէ՝ մեզ միշտ նոր է թւում, թէպէտ շատ մտածողներ նոյնը ասած լինին. բայց բան այն է, որ հանճարն ինքն է անմիջապէս տեսել, նկատել մտքերը և գաղափարները մեր համար անտեսանելի աշխարհներում և ինքն է, կեանք տուել այդ մտքերին և գաղափարներին: Եւ յիրաւի, մեծ հոգիների կոչումն է ոչ թէ ստեղծել նոր մտքեր, այլ յարութիւն տալ այն մտքերին, որոնց խեղակը, մոռացութեան է տուել ամբոխը: Մի ականաւոր մատենագիր ասել է՝ թէ, գեղեցկութիւնն է ամենամեծ ճշմարտութիւնը. յիրաւի, գեղեցկութեան միջոցով է, որ հեշտութեամբ մարդիկ կարողանում են տեսնել ճշմարտութիւնը, իսկ ամենափոքրիկ մասով ճշմարտութեան վերահասու լինելն է աղբիւր սիրոյ և բարութեան:

Սակայն բացի գեղարվեստական շնորհքից և նշանաւոր խելքից՝ կայ դարձեալ մի մեծ գործօն պայման՝ այն է խիղճը: Խղճի դերը հրաշալի է, ստեղծագործական հանճարի վրայ այնքան ճառելով, չը պիտի անուշադիր թողնել և խղճի կատարած դերը. զարգացած զգայուն խիղճը այնքան զօրաւոր և հզօր է՝ ինչքան և հանճարը:

Մաքուր խիղճն անհրաժեշտ է անպայման, որպէս զի գեղագէտ քանքարաւորը կարողանայ իդէալական բարձր և վեհ դիրքի վրայ կենալ՝ զերծ լկտի ստորութիւնից և կոշտ կոպտութիւնից: Մաքի ոլորտներում խիղճն՝ էլ աւելի մեծ հրաշքներ է կատարում. մարդիկների աշխարհային յարաբերութիւնների մէջ հասարակ և սովորական խելքը՝ եթէ զինուորուած է խղճով՝ հանճարեղութեան աստիճանին կարող է հասնել: Այս բարձրագոյն բարիքը՝ խիղճը՝ պայծառապէս երևոյթանում է շատ հազիւ, աւելի պակաս անգամ քան դեղագիտական տաղանդը և ուժեղ խելքը և սակայն նա է մարդկային կարևորագոյն պահանջը և նրանով ամեն բան կը լուծուի: Այն գրողը, որ ունի վառ խիղճ և ճարտար գրելու քանքար, նրա խօսքերը երկնային, չքնաշխարհիկ, մի տեսակ խորհրդաւոր են, բնութեան և կեանքի ձայնն են: Միշտ պէտք է լսել այդ ձայնին և եթէ դրա մէջ մեր համար լինի մութ կամ մեզ տակն ու վրայ անող մի բան, պարտաւոր ենք աւելի խոր և երկար մտածել՝ նա է սխալւում արդեօք, որ կանգնած է այն բարձր գագաթի վրայ և տեսնում է անընդգրկելի հեռաւորութիւնը անհուն հորիզոնի, թէ մենք ենք թարթափած սխալանքների տիղմի մէջ, մենք՝ լեռան ստորոտում՝ մեր պաշտած կուռքերով, մանր-մունըր բերկրանքներով և տխրութիւններով:

Իւրաքանչիւր մարդ միայն մի կեանք ունի և այդ կեանքն էլ նա անցուցանում է տանջանքների և անասելի ստորութիւնների մէջ. այս բանը ամեն մարդ քաջ գիտակցում է, բայց խեղճ խելքի տէր և մանաւանդ թոյլ խղճի տէր մարդիկ շուտով մտքից ձգում են և հեշտ կերպով սփոփւում են, իսկ զգայուն մարդիկ մտածում են զուր անցնող կեանքի վրայ: Աշխարհ մտնելով երջանկութեան ցնորքներով, ճշմարտութեան տենչով, կեանքի գեղեցկութեան իղձով, բարձր հոգի ունեցողը տեսնում է իրեն մի մռայլ անդունդի մէջ, ուր տիրում է խառնաշփոթ կռիւ, ընկճուածների անլսելի կոծը և յաղթողների ձանձրոյթը: Նա սարսափահար եղած տեսնում է, որ ինքն էլ խրուած է այդ սոսկալի մարտի մէջ և որ ոչ միայն ինքն է սեղմւում ուրիշներից, այլ և ինքն էլ ակամայ ճնշում է ուրիշներին. նա տեսնում է զոհերի մի անսահման ասպարէզ լցուած ջախջախուած և ոտնահար եղած կեանքով: Բայց աւելի սարսափելին այն է, որ նա տեսնում է՝ ինչպէս անցնում են տարիները, երիտասարդութիւնից նա հասնում է կատարեալ հասակին, վերջապէս նա ծերանում է, ոսկի կեանքի չնչին պաշարն սպառւում է, իսկ մեծ կռիւը դարձեալ շարունակւում է, ագահութեան, ստութեան, ցոփութեան կռիւը և նա՝ այն մեծ ծերունին, կաշկանդուած է այդ խաւարչին ոյժերով: Մեծ հոգիները դիտելով այդ ամենը՝ մտատանջութիւնից ծիւրւում են և մի ելք են որոնում: Նրանք լարում են իրենց միտքը և սիրտը այդ աւերմունքի առաջն առնելու համար:

Գոյութիւն ունի, անշուշտ, մտածում են նրանք, մարդկային գործառնութեան պատճառ առիթ և կամ կէտ նպատակի՝ մի վեհագոյն օրէնք, օրէնք մարդկանց եղբայրացնելու համար, նրանց մարդավար դարձնելու, Աստուածակերպ շինելու նրանց բնութիւնը, սրբազան պարտաւորութիւնը երկրի վրայ հաստատելու համար:—Խիստ ողբում է այդպիսի մարդկանց ոգին և իրենց գերբնական խանդով՝ աղերսանքով դիմում են դէպի Յաւիտենականը և կարողանում են կենդանի մտքի աչքով տեսնել՝ թէպէտ դեռ անմեկնելի, բայց ճշմարիտ և անդրդուելի օրէնքը՝ այն է՝ սէր դէպի ընկերը: Եւ առաւել իմաստնագոյն և ոչ առաւել պայծառագոյն դրանից, սակաւին ոչ մի մեծ հոգի՝ չի խորհել և քարոզել մի այլ օրէնք և ահա երեք հազար տարուց աւել է, որ բոլոր մեծ մտածողները իրենց հոգեկան տանջանքներին վախճան են տալիս՝ կրկնելով միմիայն՝ թէ սիրեցէք իրար: Սա է ամեն բան, սա է առաջնորդում դէպի վերնագոյն սկզբունքը և դէպի սրբութիւնը, առանց որի երկնաւոր կեանքը շատ տխուր բան է: Այդ օրէնքը նրմանապէս հաստատուեց Խաչի վրայ և այդ

օրէնքը պիտի ղեկավարէ առանց բացառութեան մարդկային բոլոր գործառնութիւնները, այդ օրէնքը ստիպում է ամէն բոպէ հարցնել մեր ներքին դատաւորին՝ խղճին՝ մեր արարքների համար, որոնք մեզ թւում են արդար, մինչդեռ նրանք անխղճմտանք են և զըզուելի։

Խիղճը պիտի հսկէ մեր մտածողութիւններին, մեր սիրոյ, մեր աշխատութիւնների վրայ. արդ, եթէ խղճի դատաստանին ենթարկենք „ընդունուած“ գաղափարներից շատերը և շատ տեսակ մարդկային աշխատութիւններ, — մենք կը տեսնենք, որ նրանք թւում են թէ բարձր են և պիտանի, այլ իսկապէս են անխիղճ, անարդար, վնասակար և աւերող։ Օրինակի համար, Արեւմտեան Եւրոպայում աշխատաւորները գեղարուեստի և ձեռագործի կատարեալ ճարտարութեամբ մեծ և մանր զանազան տեսակ կուռքեր են շինում, որպէս զի Չինաստանի, Հնդկաստանի և այլ տեղերի հարիւրաւոր — միլիոնաւոր կռապաշտ ամբոխի վրայ ծախեն, շահ ստանան։ Ի հարկէ, այդ աշխատանքը անիծեալ է, վասն զի ինչ սոսկալի բան է մտածել, որ լուսաւորութեան հրաշալիքները՝ շոգին, էլէքտրականութիւնը, քիմիան ծառայում են կուռքեր շինելու. կրթուած խիղճը պիտի բողոքի այդպիսի աշխատութեան դէմ և արգելք դրան։

Կամ ի՞նչ պիտի ասէ խիղճը այն բանի դէմ, որ խաղաղութեան և լուսաւորութեան երկրներում մարդկանց ոյժի ամբողջ երրորդ մասը զբաղուած է մարդիկ կոտորելու հրազէնների պատրաստութեամբ։ Շատ տաղանդաւոր մարդիկ իրենց նուիրում են խեղճերին պաշտպանելու, բայց աւելի շատ և աւելի զօրեղ մարդիկ զբաղուած են դայթակղեցուցիչ հաստատութիւններով, տեսարաններով, ցնորական շռայլութիւններով հարստահարելու վայրակ կերպով տգէտ ամբոխին և խապառ փչացնելու նրան բարոյապէս և նիւթապէս։ Այդպէս չէր լինի, եթէ վառ խիղճը լինէր մեր ղեկավարը մեր ամէն գործառնութիւնների մէջ։ Այդպէս կը լինի, քանի որ դաստիարակութեան ամբողջ ոյժը սպառւում է աշակերտի ուղեղի վրայ, իսկ նրա հոգևոր և սրտի կրթութեան վրայ հազիւ թէ մի խօսք է լինում. եկեղեցու հասարակական կրթութիւնն էլ թուլացած է. ժամանակ է, որ մեր կեանքը կազմակերպենք խղճի համաձայն, այդ մենք պարտաւոր ենք և կարող ենք անել։ Բաւական է, որ եսական բաղձաւորութեան գաղափարից հրաժարուենք. եսական բաղձաւորութեան հիմքը չարութիւնն է, վասն զի եսական բաղձաւորութիւնը ձգտում է լինել ամէնից հարուստ, ուժեղ, տիրող բոլորին, հարստահարող բոլորին և անամօթ կերպով դա կոչւում է մրցումն, մինչդեռ դրանից ծագում է նախանձ, քարասրտութիւն, ատելութիւն։ Ճշմարիտ ու առողջ բախտաւորութիւնն այն է, որ մարդ իրեն լաւ է զգում երբ դիմացինն էլ բարի, սիրալիր և պատրաստ է իրեն հաճութեամբ ձեռք տալու, օգնելու ինքն էլ նրան։

Կենդանի խիղճը հզօր է, քան հարստութիւնը, տաղանդը, գեղարուեստը, գիտութիւնը և քաղաքականութիւնը։

Ն. ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆ.

ՄՐՄՌԻՆՋՔ

Ի ՅԻՇԱՏԱԿ ՏՕՆԻ ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ

Ո՞վ ես դու, Նոր Եղիազար քաջափառ,
Հոգի Նախանձաւոր և հանդիսադիր,
Զխաչն ի յուսդ առեալ, զԱւետարան ի գիրկդ,
Վազես երթաս վկայել վասն Յիսուսի.
Քեզ ոչ ինչ փոյթ է թողուլ զպատարագն ի սեղան
Թողուլ զերախայն յաւազանին մկրտարան,
Թողուլ զհարսն ի քօղ և փեսայն ի պսակ.
Ո՜հ, միթէ զոյժ եհաս քեզ ի վանանդ,
Թէ մոխրապաշտ Մոգք հասին մտին ի Հայաստան,
Յազկերտ հրամայէ, քակին Եկեղեցիք, շինին
Ատրուշանք.
Ելցէ Յիսուս ի տաճարէն, մտցէ Որմիզդ ընդ սատան.
Ո՜ն, զինուոր դու զօրավարին Նազովրեցւոյ,
Կրօն, Հաւատ և եկեղեցի կոչէ զքեզ ի մարտ.
Գնա՛, գնա՛ և մեռիր,
Ո՞վ սուրբ Ղևոնդէ.

Մեծին Գրիգորի տան և գահին ժառանգ
Սուրբ Հայրապետդ Յովսէփ·
Լո՛ւր, ի Վայոց ձորէն հնչէ վայ ի Հայաստան·
Ե՛լ, հա՛ր զզանգակ սուրբ տաճարին Էջմիածնի,
Ա՛ռ զգրիչ քո շոյտ գրեա՛ զկոնդակ·
Տո՛ւր հրաւէր Հայոց հօտին և հովուաց,
Աշխարհախումբ լինել յԱրտաշատ·
Անդ կնքել նոր ուխտ միութեան·
Անարատ պահել զհայրենի հաւատ,
Կռուել վասն կրօնի և վասն եկեղեցւոյ ազատութեան·
Թող մեռցին հովիւք ընդ հօտին և հարք ընդ որդիս,
Թող ի զոհ երթան վասն Եկեղեցւոյ
Յովսէփ իւր ընկերօք, Վարդան իւր նիզակակցօք·
Թէ բառնի Կրօն և Հաւատ
Զի՞ այնուհետև մեզ կեանք և աշխարհ,

Ըմբշտոունեաց աշխարհին հսկող հօտապետ Սահակ,

ՅԱրտօսայ բարձրասար դիտանոցէն
Հայի՞ս ընդ գագաթ Մասեաց միգապատ·
Տես զի՞րդ ի Կասպիական ծովէն
Հողմավար գան սեաւ ամպոց երամք,
Գան խռնին բարդին յԱյրարատ և յԱրտազ·
Զրադաշտ զայրագին գոռայ թափել կարկուտ սաստկահար,
Փշրել զորթատունկս Գրիգորի, քանդել սուրբ օրինաց ցանկ,
Ե՛լ այտի, հանի՛ր յԱրտաշատ,
Ղևոնդ Յովսէփ և համայն ուխտ Եկեղեցւոյ
Քեզ սպասեն անդ, զի լիցիս դու նոցա թարգման·
Տեսցուք զի՞նչ խօսի մոլեկրօն Պարսիկ·
Թէ ասէ՝ թողէք զՅիսուսի Աւետարան
Եւ մեր հարց սրբազան Հաւատ,
Հոգի՛ անվեհեր, տուր անդէն քաջ քաջ պատասխան·
Ասա՛ համարձակ թէ Հայք մեռանին
Եւ չթողուն հայրենի սուրբ աւանդ·

Մուշէ, Արշէն, և Սամուէլ
Քաջազօտի երիցունք և պաշտօնեայք Աւետարանին,
Հաւասար մրցողք յասպարէզ նահատակութեան,
Ընդ Յովսեփայ, Սահակայ և Ղևոնդի·
Ո՜վ, չինական հօտարած փոքրիկ հովիւք,
Եդին զանձինս իւրեանց ի վերայ փոքրիկ հօտին·
Դո՞ւք էք արդեօք այն փոքրիկն
Որ մեծ է յարքայութեան Երկնից·
Ո՞ ծառայք ազնիւք ի սակաւուն հաւատարիմ,
Մտէ՛ք յուրախութիւն Տեառն,

Աբրահամ և Քաջաջ սարկաւագունք,
Առէք զբուրվառս ձեր և լցէք զհուր,
Խաչանման արկէք զուրարս զկապանս մահուն·
Երթամք նախ ի բացօթեայ տաճար
Աւարայրի մեռելոց դաշտին,
Ուր կաղմին սեղանք զոհից, զենանին սուրբ Գրիգորի գառինք,
Ուր ընդ սուր և ընդ հուր անցեալ
Ողջակիզին Եկեղեցւոյ որդիք·
Սարկաւագունք, խունկ ծխեցէք ի հոտ անոյշ
Հաւարշանայ շիրմաց անմահ մեռելոց·
Օ՛ն թողէք արդ զորդւոց շիրիմս, երթամք յԱպար աշխարհ,
Օրհնեմք անդ զհարց գերեզման,
Եւ զյիշատակ կատարման նոցա,

Ձեռս ի վեր կալէք, ձեռս ի վեր, Յովսէփ, Սահակ և Ղևոնդ,

Երիցունք և սարկաւագունք,
Ո՜հ, ծերանալոյ ձեր ժամն եհաս·
Ահա կապեն զձեզ ի գօտի մահուն,
Ահա վարեն տանին զձեզ ի Պարսս հեռագոյն,
Յերկիր Նժդեհ ի քաղաքն Նիւշապուհ,
Կամար ձեր չէ մարգարտայեռ, այլ շղթայ է ծանրակուռ·
Ո՞ տայր ինձ համբուրել զկապանս ձեր սուրբ·
Ձեօք արձակեցան ազատ որդիք Եկեղեցւոյ·
Յաղթանակ տարաւ Խաչ, փառաւորեցաւ Յիսուս·
Ո՜վ սուրբ Ղևոնդեանք։

Զարաշուքն այն Դենշապուհ
Յանձնէր զձեզ Մոգպետին մոլեռանդ,
Որ նովին շղթայիւք պրկեալ
Դընէր ի գէճ և խաւարչտին բանտ·
Մարմին էր ձեր զէն, և կռուելով տոկացիք,
Վշտակրեալ ի դառն կտտանս,
Ոչ փշրէր անօթ հոգւոյն ձեր անվկանդ·
Դուք լոյս ի խաւարի լոյս ծագեցիք անդ
Մոգպետին խաւարապատ աչաց,
Որ ի մահ ննջէր Զրադաշտին ուսմամբ, հրաշիւք բացան աչք,
Ետես զլոյս Յիսուս, և հաւատաց յԱստուած·
Ո՛վ սուրբ Ղևոնդեանք,

Անցանէր այս Տաղկազարդ
Մեծ Պասեքին օր գայր հասանէր անդ,
Մերձենայր տակաւ տակաւ Գողգոթային Խաչ·
Պիտոյ էր ձեզ Սիօնի վերնատուն մի զարդարեալ համակ,
Պիտոյ էր ձեզ սուրբ Ընթրեաց սեղան և Կենաց բաժակ—
Զայդ պատրաստէր շոյտ Մոգպետն այն հաւատացեալ,

Ինքնին լինէր ձեզ անդ կոչնատէր և հրաւիրակ.
Զաքէի նման հայցէր, լոյս և փրկութիւն տանէր իւր տան.
Լուանայր զոտս ձեր, զջուրն արկանէր զանձամբ.
Մկրտէր և պաշտէր զձեզ իբրև զԱստուծոյ հրեշտակ.
Սեղան կազմէր նահապետական, սեղան բարելից և առատ.
Ո՜հ, քաղցեալ սովատանջ էին հիւրք զքառասուն օր ի բանտ.
Ցանկանալով կերէք, կշտապինտ կերէք, ո՜ խաչապատրաստ վկայք,
Այդ է ձեր վերջին ընթրիք,
վերջին երեկուն և զատկական զատն,
Ո՛վ սուրբ Ղևոնդեանք.

Ելէք գոհացէք և օրհնեցէք զսեղան.
հասին ձեզ դահիճք անգութ.
Ո՜հ, հանեալ ի զուարթ սեղանոյդ,
Կրկին կապեալ վարեն զձեզ ընդ առապար աւազուտ.
Զոյգ զոյգ լծեալ անադորոյն սպանչաց,
Քարշեն զձեզ անխնայ ընդ քար և ընդ թուփ.
Դուք իբրև այն մշակին հարօր զերկիր հերկելով
Ուղիղ վարէք տանիք զարքայութեան ակօսն.
Իբրև ցորենահատք դուք ցանեալ ցրուիք,
Որպէս առակէ յիւր բան՝ սերմանահան Յիսուս։
Անդ ի Խուժաստան ծաղկին փշրանք ոսկերաց ձերոց ի հող,
Աստ ի Հայոց աշխարհ բուսանիք ցորեան առօք և հասկաթուռ.
Այսպէս մեռելութիւն ձեր՝ կենդանի և բարգաւաճ առար զորդիս Եկեղեցւոյ,
Ո՛վ սուրբ Ղևոնդեանք։

Դենշապուհ յոտին կայ սուր ընդ մէջ թերաքամ,
Առ նմին կանգնին դահիճք դաժանադէմ մերկասուր պատրաստ
Կանգնին նաև առ ձեօք երկնահրաւէր հոգէաւանդ հրեշտակք.
Ժամ եհաս, ո՜հ, զոհին և զենման,
Կափուցէ՜ք, ո՛վ Սուրբք, առ աշխարհ պահ մի զաչս ձեր,
Տեսցուք զի՞նչ առնէ Յազկերտ և աշխարհ
Յետ բառնալոյ աստի զձեր մահկանացու կեանք,
Ո՜հ, զքեզ նախանուէր զենուն, Սահակ զօրաւորդ ի բան,
Որ լռէ քո ճարտար լեզուն ազատ և թարգման.
Յառաջ մատի՛ր ի սուր, Ղևոնդ ձայնէ քեզ,
Ո՛վ հայրապետ Յովսէփ,
Ասէ, պատուեմ զքեզ աստ, դու վեհ ես քան զիս
Յառաջ մատիք և դուք, երիցունք և սարկաւագունք,
Մի՛ վարանիք, տուք զձեր պարանոց, առէք զանմահութիւն
Չմեռանիմ ես Ղևոնդ, մնամ ձեզ յետին տրուպ.
Մինչև մի մի յուղարկեմ զձեզ առ Յիսուս,
Ո՛ իմ խաչակից վկայք, այդ է իմ սուրբ ուխտ։

Իսկ դու զի՞ առնես՝ հոգի՛ զօրավիգ,
Հոգի՛ հզօր և մինչ ի մահ անյաղթ.
Զընկերս քո ամէն ետուր ի սրոյ բերան.
Միթէ մնաց այլ ես քեզ նոր ինչ կասկած.
Մատի՛ր և դու ի սուր, կան սպասեն քեզ մարտիրոս մշակք
Խմբովին երթալ առ փարձատուն Յիսուս և կալ յանդիման,
Ասել համարձակ. Տէ՛ր, վասն Հայոց աշխարհին մեռաք,
տո՛ւր զվրէժ մեր արեան.
Առէք զձեր պսակն անեղծ անթառամ,
Ո՛վ իմ ազնիւ ծառայք,
Գրիգորէ, Ներսէս և Սահակ,
Առէք ընդ ձեզ զթոռնիկն ձեր զկարմիր Վարդան.
Պսակազգեստ շքով ելէք ընդ առաջ յաղթական առաքինեաց,
Ահա գան առ ձեզ Ղևոնդեանց հարք, որ ընդ որդիս մեռան.
Առէք տարէք յանդիման կացուցէք Պետական աթոռին առաջ,
Տուք զաղերսագիր և յիշեցէք զտառապեալ Հայաստան։

1876

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ՏՐԴԱՏԻՑ ՑԵՏՈՅ ՆԻ ՄԵԾՆ ՆԵՐՍԻՍԻ ԺԱՄԱՆԱԿԸ·

Չորրորդ դարի սկզբներում ս. Գրիգոր Լուսաւորչի առաքելական գործունէութեամբ քրիստոնէութիւնը Հայաստանում տիրապետող դարձաւ։ Կարճ ժամանակամիջոցում հեթանոսութեան յիշատակները քրիստոնէականի փոխուելով վեհութիւն և բարեկրթող բնաւորութիւն ստացան։ Մեհեանների տեղ քրիստոնէական եկեղեցու հիմքը դրուեցաւ, կռոց բագինների փոխարէն կենսատու խաչը բարձրացաւ։ Իսկ հեթանոսական մոլեռանդութիւնը տեղի տուաւ փրկարար հաւատքին։ Այս կերպով, երեք դար շարունակ մաքառելուց յե-

տոյ, քրիստոնէական եկեղեցին վերահաստատուեցաւ Հայաստանում, իսկ հայ քրիստոնեայ համայնքի գոյութիւնն ապահովուեցաւ ս. Լուսաւորչի կազմակերպած եկեղեցական դասակարգութեամբ։

Թէեւ քրիստոնէութիւնն արտաքուստ օրինական կազմակերպութիւն ստացաւ Հայաստանում և պետութեան ջերմ պաշտպանութեան շնորհիւ ընդունելութիւն գտաւ գրեթէ առանց ժողովրդական դիմադրութեան, սակայն դարերի ընթացքում ժողովրդի հոգու և մտքի հետ ձուլուած հեթանոսական կրօնն իսպառ չկորցրեց իւր նախկին նշանակութիւնն ու սրբութիւնը ժողովրդի աչքում։ Եւ այս երեւոյթը ուղիղ հետեւումն է այն պատմական ճշմարտութեան, թէ կրօնական համոզմունքները և նոցա հետ սերտ առընչութիւն ունեցող զանազան ծէսեր և սովորութիւններ հեշտութեամբ տեղի չեն տալիս նոր կրօնական հայեացքների, որքան էլ վերջինները բարոյական, ճշմարիտ և քաղաքակրթող լինին։

Եւ արդարեւ քրիստոնէութեան ճշմարիտ և զօրեղ հովանաւորների մահուանից յետոյ, Հայաստանում առկայծող հեթանոսութիւնը վերջին անգամ գլուխ բարձրացրեց և մի լուռ մաքառումն սկսուեցաւ նոր կրօնի դէմ։ Այս մաքառումը մի ամբողջ դար տեւեց, որի պարագլուխ հանդիսացան ժամանակի հեղինակաւոր անձինք՝ նախարարներ և իշխաններ, որոնք մինչեւ անգամ դաւաճանելով Աւետարանի վարդապետութեան և ազգային եկեղեցուն, նորից հեթանոսութեան գիրկն ընկան և ամեն տեսակ խոչընդոտներ յարուցին Արշակունեաց գահի գոյութեան և Հայ ազգի կրօնական և բարոյական յառաջադիմութեան դէմ։ Չորրորդ դարի ազգային պատմութիւնն այդպիսի բազմաթիւ և տխուր երեւոյթների մի շարք է ներկայացնում, որոնց մէջ աչքի են ընկնում դաւաճանութեան և հաւատուրացութեան փորձեր, կենդանի հաւատքի թուլութիւն, վարք ու բարքի ապականութիւն, որ արքունի տան մէջ վերջին ծայրայեղութեան հանելով և իշխանական տոհմերի մէջ արմատանալով, հետզհետէ ժողովրդի զանազան խաւերի մէջ էր թափանցում։ Դեռ եւս Տրդատ թագաւորն իւր կենդանութեան ժամանակ նկատելով նախարարական տոհմերի ընտանեկան կեանքի անկումը և բարքերի ապականումը, որ արդէն սկսել էր վարակել նաեւ ռամիկ ժողովրդը, յորդորում էր նոցա քրիստ. ճշմարիտ հրահանգներով առաջնորդուիլ և „սաստելով հաւանեցուցանէր զմեծամեծ նախարարսն, միանգամայն և զամենայն բազմութիւն ռամկին լինել արդարեւ Քրիստոսի“։ Իսկ „խստասիրտ“, „ամբարհաւաճ“, „բարուց անհամբոյր“, և „ճշմարտութեան անհարազատ“ նախարարները, ինչպէս ցաւելով շեշտում է Խորենացին, կամակորութեամբ ընդդիմացան „կամաց թագաւորին յաղագս կրօնիցն քրիստոսականաց, զհետ երթալով կամաց կանանց և հարճից“։ Նախարարները այս չափով չբաւականացան։ Նոքա Տրդատի անձնաւորութեան մէջ իւրեանց քմահաճոյքն ու հակաքրիստոնէական ընթացքը խրախուսող և արդարացնող ոչինչ չգտնելով, թունաւորելով կարճեցին առաքինութիւններով օժտուած մեծ թագաւորի կեանքը, որ պարսից և հռովմայեցւոց քաղաքականութեան կռուածաղիկ դարձած Հայկական գահի և Հայաստանեայց վերահաստատուած եկեղեցու հզօր նեցուկն էր։

Ս. Տրդատի նման ողբերգական վախճան ունեցան և ս. Լուսաւորչի անմիջական յաջորդները՝ ս. Արիստակէս, ս. Յուսիկ, ծերունին Դանիէլ, Մեծն Ներսէս։ Իսկ ոմանք իբրեւ քրիստոնէութեան անկեղծ պաշտպաններ և ժողովրդի ճշմարիտ դաստիարակներ, խիստ հալածանքների ենթարկուեցան ամբոխի կողմից, որոնք երբեմն իշխանաւորներից դրդուած, մահուան սպառնալիքներ էին տալիս իւրեանց բարերարներին։ Այդպէս ծոփաց Արքեղայոս իշխանը նահատակեց ս. Արիստակէսին մինչ սա գաւառից գաւառ շրջելով հովուում և դաստիարակում էր նորադարձ հօտը։ Իսկ ս. Վրթանէս Տարօն գաւառում հրաշքով ազատուեցաւ հալածող դաւադիրներից, որոնք Հայոց Մեծ

Տիկնոջ թելադրութեամբ կամենում էին սպանել այն քահանայապետին, որի ժամանակ, պատմչի վկայութեամբ, „խրատունք“ և „արդարութիւն“ էր ծաղկում և „խաղաղութիւն“ ու „շինութիւն“ էր տիրապետում ամենուրեք:

Այժմ հարց է ծագում թէ ինչո՞ւ գլխաւորապէս իշխանական դասակարգը այսպիսի բացառիկ դիրք էր բռնում քրիստոնէութեան և հոգևորականութեան ներկայացուցիչների դէմ, որ և անդարմանելի վնաս պատճառեց երկուստեք թշնամիներով շրջապատուած Արշակունեաց գահին և վերահաստատուած եկեղեցուն:

Քրիստոնէութիւնից առաջ և յետոյ, երկրի աշխարհագրական դիրքի շնորհիւ, Հայաստանի քաղաքական իշխանութիւնը անկարող եղաւ ամուր և վերջնական կենդրոնացումն ստանալ: Իւրաքանչիւր իշխան, նախարար և կուսակալ իւր երկրի ազատ տէրը լինելով, գրեթէ անկախ զինուորական ոյժ էր կազմում: Այս մանր քաղաքական իշխանութիւններից իւրաքանչիւրը, ընդհանուր ազգային շահերից զատ, ունէր և իւր առանձին քաղաքական ձգտումները: Ուստի և ամենայն ջանք գործ էին դնում, յաճախ ժողովրդական ապստամբութեանց գլուխ կանգնելով և կամ օտարների միջամտութեանն ապաւինելով, իւրեանց անկախութիւնը զօրեղացնել: Հեթանոսական կրօնը և քրմական դասը այդպիսիների ձեռքում յարմարագոյն միջոց էր իւրեանց հեղինակութիւնը և իշխանութիւնը անվտանգ պահելու համար: Այս հանգամանքն էր պատճառ որ քրիստոնէութեան առաջին երեք դարերում մինչ քրիստոնէութիւնը ռամիկ ժողովրդի մէջ հեշտութեամբ տարածւում և արդիւնաւոր պտուղներ էր տալիս, իշխանական տների համար անմատչելի մնաց և անգամ խիստ հալածանքի ենթարկուեցաւ նոցա կողմից: Այս դասակարգը քրիստոնէութիւնն ընդունեց միայն չորրորդ դարու սկզբում առանց որ և է նախապատրաստութեան, դուցէ յաղթուելով ոչ այնքան նոր կրօնի վեհ սկզբունքներից և նորա փառաւորեալ աստուածային կենդանարար ճշմարտութիւններից, որքան Մեծն Տրդատի և ս. Լուսաւորչի բարձր հեղինակութիւնից: Ուրեմն դարձեալ քրիստոնէութիւնը իւր էութեամբ անմատչելի, և նորա փրկարար ոյժը, մարդկային փրկագործութիւնը, անխտրական սէրը, ջերմ հաւատքի և յուսոյ գաղափարները անըմբռնելի մնացին բարձր դասակարգի համար:

Բնական է որ այս հանգամանքների մէջ քրիստոնէութիւնը ցանկալի հիմնաւորութիւն չէր կարող ստանալ, քանի որ ժողովրդի առաջնորդող դասակարգը դէպի հեթանոսութիւնն էր հակուած: Ժողովրդի բարոյական կատարելութիւնը, որ ամեն մի քրիստոնէի կէտ նպատակն է, անհնարին էր մի այնպիսի ժամանակ, երբ բուն ժողովուրդը կոյր էր հոգեպէս, իսկ բարձր դասակարգը դիւրութեամբ էր մոլորեցնում նորան իւր հակակրօնական հակումներով և հեթանոսական ձգտումներով: Այս շրջանը բարձր դասակարգի համար կրօնական անտարբերութեան մի շրջան էր, որ և պատճառ դարձաւ բարոյական անկման, հանրականվարքի ապականութեան, որոնք որևէ ազգի միայն կործանումն կարող էին պատճառել:

Շուտով այս ներքին քայքայման հետևեցին և քաղաքական դժբաղդ երևոյթներ:

Հանգամանքներն աւելի ևս բարդուեցան, երբ Տրդատի անմիջական յաջորդները, չունենալով իւրեանց նախորդի հեռատեսութիւնն և հզօր արիութիւնը, փոխանակ երկրի ներքին բարեկարգութեան վրայ մտածելու և երկրի ներքին բարոյական (կրօնական) ամրութեան համար աշխատելու, անհոգ հեշտասիրութեան յետևից ընկան և առաջին դայթակղութեան օրինակը իրենք եղան: Արշակ Բ. և Պապ թագաւորների օրով բազմաթիւ արիւնհեղութիւնները, իշխանական տների փոխադարձ ատելութիւնը, կանանց յափշտակութիւնները, պալատական քահանաների ընթացքը, որոնք մինչև անգամ ահաւոր խորհրդի հետ թոյն խառնելով և զանազան անձանց մահ պատճառելով ընդունակ էին ար-

քաներին հաճելի երեւալ, հեթանոսութեան կենդանանալու ապացոյց եւ բարոյապէս ծայրայեղ անկման արտայայտութիւններ էին։ Այս ամենի վրայ աւելացան եւ հաւատուրացութեան եւ օտարասիրութեան դէպքերը։

Արքունական տան մեղկ հեշտասիրութիւնը եւ նախարարական տների մէջ տեղի ունեցած ներքին երկպառակութիւնները, սթափեցրին Հայաստանի վաղեմի դարանակալ թշնամիներին։ Սասանեանները դեռ եւս չմոռացած Տրդատից կրած վերջին ծանր պարտութիւնը եւ քրիստոնէութեան հասցրած բարոյական հարուածը, որով մի զօրեղ պատուար կազմուեցաւ պարսից քաղաքականութեան դէմ արեւմուտքի նկատմամբ, իւրեանց նախկին ծրագիրները Հայաստանի տիրապետութեան եւ Որմզդական կրօնը տարածելու նկատմամբ աշխատեցին իրագործել։ Անակնկալ արշաւանքներ սկսուեցան։ Պարսից դրդմամբ երկրի հարաւային սահմանապահ Բակուր Բդեշխը, որ երկրի զինուորական գլխաւոր ոյժերից մինն էր, ներքին ապստամբութեան գլուխ կանգնեց։ Սորա հետ միաժամանակ Մազքթաց հրոսակները անարգել հասան մինչեւ մայրաքաղաքի դռները։ Այսպէս Դ. դարու կիսից սկսած Հայաստանը արիւնահեղ պատերազմների ասպարէզ դարձաւ։ Պարսից ազդեցութիւնը հետզհետէ զօրացաւ, որին ենթարկուեցան բազմաթիւ նախարարներ այլ եւ սատար եղան պարսից քաղաքականութեան։ Արշակունեաց գահի անկման առաջին քայլն էր այս։ Ամբողջ Հայաստանում միայն հոգեւորական դասը իւր ներկայացուցիչներով եւ ազդեցիկ Մամիկոնեանք էին խորթ աչքով նայում պարսից յաջող քաղաքականութեանը, ըստ որում նորա մէջ էին տեսնում ազգային եկեղեցու եւ ազգի անկախութեան կատաղի թշնամուն։ Իսկ այդ քաղաքական յեղյեղուկ վիճակի մէջ միայն (քրիստոնէութիւնը) Եկեղեցին կարող էր փրկել ժողովրդին, լինելով նորա ներքին ամրութեան եւ բարոյական կենդանութեան միակ առհաւատչեայն։ Եւ արդարեւ Եկեղեցին կենդանութեան ոգի ներշնչեց այդ շրջանին։

Ժամանակի քաջարթուն հայրապետները իւրեանց աչքը դէպի արեւմուտք դարձրին։ Կրօնի միութիւնը Հայաստանի եւ Բիւզանդիոնի բարեկամական յարաբերութեան եւ դաշնակցութեան հանգոյցն էր, որով առ ժամանակ երկու հարեւան ազգերի շահերը միացան պարսիկների դէմ։ Այս միութիւնը անհրաժեշտ էր որքան Հայոց նոյնքան եւ Յունաց համար։ Սակայն յունաց քաղաքականութեան ոյժը նենգութեան մէջ էր. նոքա ոչ միայն չպաշտպանեցին Հայերին հասարակաց թշնամու դէմ, այլ եւ ինքեանք ձգտեցին Հայաստանին տէր դառնալ եւ այսպիսով Հայաստանը երկու ազգերի ձեռքին խաղալիք դարձաւ։

Ահաւասիկ այսպիսի կրօնական եւ քաղաքական տաղնապալի պայմանների մէջ Հայ հոգեւորականութիւնը կոչուած էր գործելու ազգի ապահովութեան համար։ Այլեւս արտաքին օգնութեան եւ քաղաքական պայմանների յաջող փոփոխութեան նկատմամբ ոչ մի յոյս չէր կարող լինել. անհրաժեշտ էր ներքին ամրութեան, բարոյական յառաջադիմութեան աշխատել եւ եկեղեցու կենդանագործող ոյժը տարածել։

Այժմ տեսնենք այս նպատակը իրագործելու համար ի՞նչ դեր խաղաց ժամանակի հոգեւորականութիւնը եւ Դ. դարի Հայ թագաւորներն ի՞նչ չափով նպաստեցին նորա արդիւնաւոր գործունէութեան։

ՂԵՒՈՆԴ ՍԱՐԿ. ԳԵԱՆՋԵՑԵԱՆ.
(Շարունակելի)։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆՔ

(Շարունակութիւն)։

Զ

Տեղեկութիւններ Տ:ր--ն--ն վարդապետի մասին. Զարբան-ը գրում է հետեւեալը. „ՏԻՐԱՆ այս մեզի միայն անուամբ ծանօթ վարդապետին՝ դրչագրաց ց--ց--կէ մը (!) մէջ հետեւեալ

երկասիրութեան կը հանդիպինք հետեւեալ խորագրով. " Տիրանայ վարդապետի Հայոց՝ պատասխանի հարցմանց Թագաւորացն Աղուանից՝ Ատրներսեհի և Փիբէի ". Հատուածք միայն կը գտնուին ի Ստեփանեան բառարանի. (Հին Դպ. եր. 763): Երևի այս տեղեկութիւնն առնուած է մեր մայր ցուցակից (Կարինեան հր. №499, նոր հմր. 511): Սոյն այս ձեռագիրը (Ջգօն գիրք № 3) Տիրանունի երկասիրութեան գլխում հետևեալ վերնագիրն ունի, որը ցուցակ կազմողից [illegible] է. ,,Տիրաննոյ (ուրեմն՝ Տիրանուն և ոչ Տիրան) Հայոց վարդապետի. պատասխանի հարցմանց Թագաւորացն աղուանից Ատրներսեհի և Փիպէի": Գրուածքի սկզբնաւորութիւնն է. ,,Ընկալեալ զհրամանս և զխնդիրս ձեր յոյժ փութով և յաւէրժ ըղձալի փափաքանօք ուրախ եղեաք ի սմա, իբրև ի պարգևս և ի ձիրս երկնաւորս . ." Կարճ յառաջաբանից յետոյ՝ ընկլուում են Տիրանունի լուծմունքները կամ մեկնութիւնները, որոնք յօդուած յօդուած պատասխաններ են: Հարցումները չկան: Առաջին յօդուածն է. ,, Ա. Արդ՝ սկիզբն աւուր առաւօտն և ոչ երեկոյն . . .", վերջին յօդուածն է, որով և վերջանում է գրուածքը. ,,Մ. Արդ ոչ գիտէին զնա թէ ով է. զի ասէ Դա է որդի իմ. իսկ աղաւնին էջ ի վերայ Յիսուսի, իբրև ոք զձեռն իւր դիցէ և ասասցէ. Սա է":

Հայոց 50 թուին գտնում ենք տեղեկութիւն Տիրանունի մասին և Մխիթ. Այրիվանեցումն. ,,Տիրանուն կաթողիկոս Աղուանից արար լուծմունք 500 դժար բանից" (Սպբ. 1867, եր. 64):

Այսպէս ուրեմն մեր միակ ձեռագիրը ունի միայն 200 (Մ) լուծմունք, մինչդեռ Այրիվանեցուց առաջ բերուած տեղեկութիւնը ասում է 500 (Եճ): Կարծում ենք, որ այս տարբերութիւնը ծագում է ոչ թէ մեր ձեռագրի պակասաւորութիւնից, այլ բոլորագիր Ⴢ և Ⴡ գրերի շփոթութիւնից: Երևի պէտք է լինէր ,,լուծմունք ։րճ։ դժար բանից": Բնի և եչի շփոթութիւնները շատ յաճախ են, բաւական է որ բնի գլխի գիծը չտեսնուի, արդէն ստացւում է եչ (բոլորագրի մէջ մանաւանդ):

Այսպէս ուրեմն՝ ցնոր տեղեկութիւն՝ կարող ենք ասել, որ Տիրանունը գրել է [illegible] դարի սկզբում [illegible] [illegible] լուծմունք կամ պատասխան Աղուանից Ատրներսեհ և Փի[լի]պէ Թագաւորների հարցմունքներին: Այս կամ սրանց հետ նոյնանուն իշխանների մասին Հ. Ալիշանը տալիս է հետևեալ տեղեկութիւնը. «[illegible] որդի [illegible], որ յիշի [illegible] ,,աստուածապահ և բնիկ տէր Սիւնեաց" կոչմամբ, կեայր ի կէս Ը դարու. և յետ կիսոյն: (Սիսական եր. 14,) բայց սրանից առաջ յիշւում է մի այլ Փիլիպպոս վեցերորդ դարի Բ կիսում (Սիսակ. եր. 17): Աղուանից պատմութեան մէջ յիշւում է Ատրներսեհ—ի – Փիլիպեան. ,,Ձայս Վարազ-Տրդատ և զորդի նորա Ստեփաննոս՝ Ներսեհ -ի- Փիլի - պեան ազգակիցն նորա սպան ի միում ժամու ի խորաձորն, որ կոչի Դադոյի վանք', (Կաղանկ. եր. 272. 1860 Մոսկ.): Մխիթ. Այրիվանեցին Աղուանից Թագաւորների շարքում դնում է . . ,,Վարազ Տրդատ, Ստեփաննոս, [illegible] . . . " (հր. 1867, եր. 23): Սրանցից աւելի ուշ ժամանակով յիշւում են Գրիգոր իշխանի որդիքը. ,,Սևադայ, Ատրներսեհ և Փիլիպպէ" (Աղ. պատմ. եր. 273): Այս վկայութիւններից պարզ երևում է, թէ որչափ բազմաթիւ են Ատրներսեհներ և Փիլիպպոսներ Աղուանքում և դրակից Սիւնիքում, որոնցից մի քանիսի ճիշտ ժամանակը որոշելը շատ դժուար է և անհաստատ: Միւս կողմից Աղուանից կաթողիկոսների շարքում (Կաղանկ. եր. 274, Մխիթ. Այրիվան. եր. 24.) չէ յիշւում և ոչ մի տեղ Տիրանուն կաթուղիկոս:

Սակայն այս մեր Տիրանունի ժամանակին ճիշտ յարմարւում է ,,Տէր Յոհան" կաթողիկոսը, ,,յեպիսկոպոսութենէ Ամարասայ կոչեցեալ յաթոռն" (Կաղ. եր. 275): Այս Տէր-Յոհանի նախորդներն են՝ Տէր Աբաս, ժամանակակից հայոց թուականին, Տէր Վիրոյ (34 կամ 33 տարի գահակալած), Տէր Զաքարիա

(15 տարի), որին յաջորդում է ինքը՝ Տէր-Յոհանը, կամ ինչպէս մենք կարծում ենք՝ Տիրանունը, եթէ միայն վերջինս կաթուղիկոս էր և ապրում էր Հայոց 50 թուականին, ըստ վկայութեան Մխ. Այրիվանեցու: Գահակալում է 27 տարի: [illegible] և [illegible] անունների շփոթութիւնը կարող է մեկնուիլ Տէր Աւհան (Օհան) միջին ձևով:

Տիրանունի գրութիւնը մեր ձեռագրում գետեղուած է հետևեալ դասաւորութեամբ. Ա. Թուղթ Արամայ, Բ. Տիրանուն. Գ. Խոստովանութեան գիր Անանիայի, Դ. Անանիայի Հայոց վարդապետի սակս բացայայտութեան Թուոց: Այս վերջին երկուսի մասին տես մեր հրատ. „Գիր խոստովանութեան“: Իսկ „Արամի թղթի“ մասին առիթ կունենանք խօսելու:

Մինչև այժմս յայտնի հայ ձեռագրերի ցուցակներից երևում է, որ այս չորս գրուածքն էլ գտնուել են այս մեր միակ օրինակում: Հրատարակուելուց առաջ ցանկալի էր նոր օրինակների գիւտը:

Ե

„Խորենացու Պատմութեան Ուսումնասիրութեանց“ հինգ առաջին գլխում (եր. 4—7) խօսելով մեր հին մատենագրութեան մէջ յաճախ տեղի ունեցող [illegible] դէպքերի մասին, բերել էի իբրև օրինակ նաև „[illegible] Արամազդը“ իւր [illegible] „[illegible] կամ ճշտագոյն ես՝ [illegible] Արամազդ“ ընթերցուածով: Այս վերջին ընթերցուածով ձեռագրեր այժմս ոչ միայն մի, այլ մի [illegible] էն ինձ յայտնի, որոնց մասին կխօսիմ, երբ դէպք ունենամ Խորենացու ինձ ծանօթ ձեռագրերի (մօտ 20) [illegible] և [illegible] որոշելու: Գիտնական բարեկամներիցս մէկը՝ [illegible] (կեղծ անուն), մի յօդուած հրատարակեց իմ գրածի առթիւ, առաջարկելով իւր բացատրութիւնը Խորենացու այդ մութ կէտի վերաբերութեամբ (տես „Արաքս“ 1890, գիրք Բ. եր. 59 - 62): Ընթերցողին թողնելով թէ իմ և թէ պ. Նումենի յօդուածներից, խնդրի մանրամասնութեանցը ծանօթանալ անձամբ, այս չափս եմ միայն ասում, որ Նումենը Սասանեան հարստութեան Որմիզդ թագաւորների անուններն էր փորձում մեկնել Խորենացու „Ոչ Արամազդ ոք, այլ ի կամեցողսն լինել Արամազդ, չորից ևս [illegible] անուանեցելոց Արամազդ, յորոց մի է և կունդ ոմն (այլ ընթ. [illegible]) Արամազդ“ ասացուածը (Խոր. Ա. 31): Խորենացին համեմատում է Տիգրաններին և Արամազդներին: Բայց թէ Հայկազեան Տիգրանին համեմատում է, անպատճառ „կունդ Արամազդի“ հետ և ոչ թէ „Արամազդի“ հետ ընդհանրապէս, այս չէ երևում Խորենացու հատուածից: Նումենի հետաքրքրական և սրամիտ առաջարկութեան աննպաստ է և այն, որ Խորենացին՝ [illegible] Սա-[illegible]՝ կարող էր գիտնալ միմիայն երեք Որմիզդ թագաւորներին, իսկ Դ-դ և Ե-դ Որմիզդներին (6-դ և 7-դ դարում) չէր կարող ճանաչել: Թողլ տալով նաև այն վարկածը, թէ Խորենացու „չորից“ բառը կարելի է կարդալ „երից“, թէև դեռ մինչև օրս այդպիսի ընթերցուածով ձեռագիր յայտնի չէ, այսուամենայնիւ խնդրի դժուարութիւնը՝ չէ վերանում, [illegible] Որմիզդ Ա.-ին (262 թ.) և Առաջին Շապուհից անմիջապէս յետոյ յիշում է Ներսեհ (Նարսեհ) և Որմիզդ (երկրորդ) թագաւորներին՝ այսպէս. „Քանզի լուեալ էր (Տրդատայ) զխնամակալն Շապհոյ ընդ հնդկաց թագաւորին և ընդ արևելեան խաքանայ, և զզօրավարեն Ներսեհի՝ որ և թագաւորեաց ամս ինն, և Որմզդի՝ որ ապա և նա թագաւորեաց ամս երիս՝ [illegible]“ (Բ. ձթ.): Նարսեհից յետոյ անմիջապէս թագաւորող Որմիզդը անշուշտ Որմիզդ Բ-ն է. (որի թագաւորութեան առաջին տարին ըստ Նեօլդեկէի՝ 302 թ. Tabari etc. եր. 435): Բայց մեր ստորագծած „նահատակութեամբ“ բառը կարող է թերևս ցոյց տալ որ Խորենացուն յայտնի էր մի [illegible] Որմիզդ, անշուշտ Առաջինի տիտղոսը տալով Երկրորդին:

„Նահատակութեամբքը“ մի ասացուած է,

որ իմ կարծիքով ճշտիւ համապատասխանում է արաբացի պատմիչների [illegible] կամ [illegible] և պարսիկ գրողների [illegible] և [illegible] (բոլորն էլ [illegible] նշանակութեամբ) տիտղոսներին, որ տուում էին Որմիզդ Ա-ին (տես Նոլտէկէի վերոյիշ. յօդ. առնուած Th. Nöldeke, Geschichte der Persen und Araben znr Zeit der Sasaniden &, Leyden 1879, եր. 43, ծան. 2)։ Նոլտէկէն ենթադրում է, որ առաջ բերուած պարսկերէն երկու տիտղոսները յետին թարգմանութիւն են արաբական [illegible] կամ [illegible]-ի և այս բոլորը միասին թարգմանութիւն են հին պարսկական [illegible] (=պարսկ. քաջ) տիտղոսի, որը սակայն, աւելացնենք, գործածուած է միայն Խորենացուց և այն Արամազդի համար, և ոչ թէ իւր իսկական տեղում՝ Որմիզդ թագաւորի կշտին։ Այս իսկ պատճառով էլ շատ կասկածելի է թէ երբ և իցէ՝ թէ կուզ հին պարսիկներից՝ [illegible] բառը իբրև Որմիզդ Ա-ի տիտղոս գործածուած լինի, ուստի և Խորենացու մէջ այդ բառը պէտք է հասկանալ իւր սովորական հայերէն և ոչ թէ պարսկերէն նշանակութեամբ։ Եթէ, մինչ այն, աւելացնենք, այդ „կունդուճն" բառը չէ աղճատուածը կամ թարգմանական կրկնակը նախնական „կատար ուճն"=„կատարուճն" ընթերցուածի, ինչպէս այդ ես ենթադրում էի իմ „Ուսումնասիրութեանց" մէջ (Խոր. պատմ. Ուս. Ը.)։

Որպէս զի Խորենացին կարողանար թագաւոր չորս Որմիզդներին համեմատել Տիգրանների հետ՝ պէտք է իւր երկը գրելիս լինէր Ե - Որմիզդից (631 թ.) յետոյ (քանի որ անգիտանում է Ա. Որմիզդի գոյութիւնը), այն է 7դ դարի առաջին կիսում, մի բան որ շատ նպաստաւոր կլինէր պ. Կարիէրի վերջին ենթադրութեանցը Խորենացու պատմութեան գրութեան ժամանակի մասին։

Ահա այս և ուրիշ մի քանի մանր նկատողութիւններ արգելք եղան ինձ համոզուելու պ. Նոլտէկէի բացատրութեամբ։ Տիրանունն փարպեցու (տես սոյն աշխատութեան § Զ) մի հատուածը իմ մէջ նոր մտածմունքների առիթ եղաւ։ Տիրանունն ասում է իւր ընծամանց մէջ. „Թողեր զանկրաւութիւն ժողովրդեան քո, զոր յանցեան յորթն Յրովբովամու և ի Թամուզ, ի պատկերն նախանձաւորութեան (ձեռ. նախանձաւորութենէ) ի [illegible][ն], որ կայր ի յանցս և ի մուտս տաճարին սրբութեան, զոր Հայք Արամազդ և այլք Զևս անեն" (ՃԽԳ)։

Այս հատուածից պարզւում է երկու բան. ա) որ առորոց Թամուզը Հայերը կարող էին թարգմանել և Արամազդ, բ) որ Թամուզը, (ուրեմն և թարգմանութեանց մէջ՝ Արամազդը) [illegible] դէմքով էր։ Սուրբ Գրքի մէջ Թամուզը յիշւում է մի անգամ միայն յականէ-յանուանէ. „Եւ եմոյծ զիս առաջի դրան տանն տեառն, որ հայէր ընդ հիւսիսի. և ահա նստէին անդ կանայք և ողբային զԹամուզ" (Եզեկ. Ը. 14)։ Թամուզին են ակնարկում և հետևեալ աստուածները. „կացոյց զիս ի նախադուռն դրանն ներքնոյ որ հայի ընդ հիւսիս, ուր էր արձան պատկերին [illegible] ստացողին" (Նոյն. 3)։—„Եւ ահա ի հիւսիսոյ կողմանէ ի վերայ դրան սեղանոյն ուր կայր պատկերն Նախանձու ի մուտս դրանն որ հայէր ընդ արևելս" (Նոյն. 5)։

Խորենացուց առաջ, հինգերորդ դարի ասորական թարգմանութեանց մէջ, Եփրեմ Խուրին է յիշում [illegible] պատկերը (=Թամուզ). „Որթ յանապատին... և պատկերն չորեքդիմի՝ Մանասէին" (Համաբարբ.)։ Մի ուրիշ տեղ. „Ուղղեաց (Մանասէ) զպատկերն [illegible] ի տաճարին տեառն" (Եփր. մեկ. Մնաց. գլ. Գ. Վենետ. 183։ [illegible] հատ. Ա. եր. 490)։ Յիշում է և Բարսեղը. „Մանասէ [illegible] զկուռսն ի տաճարին աստուծոյ եդ, զի ուստի արդեօք և եկեսցէ ոք, կուոցն երկիր պագցէ" (Բարս. ճառք ապաշ. տես Հայկ. բառ.)։ Կան և Խորենացուց յետոյ՝ [illegible] կուռքը յիշողներ, ինչպէս օր. Ներ. Շնորհալին (Յիսուս-Որդի) եւն., եւն։ Բայց Տիրանունն է իմ կռահացածովը, որ առնելով Եփրեմի Համաբարբառից անապատի „որթի" և [illegible] [illegible]

[illegible] յիշատակութիւնը ի միասին աւելացնում է նաև՝ Թամուզ անունը Արամազդ թարգմանութեամբ։

«Ընդհանրապէս կարծւում է թէ Թամուզ էր Փիւնիկեցոց Ադոնիսը և թերևս Եգիպտացոց Ոսիրիսը։ Ադոնիսի առասպելեալ մահն ու յարութիւնը, որ կարծւում է, թէ նշանակ էր արեգական մեկնելուն և դառնալուն, տօնւում էր ամառնային արևադարձի ժամանակ, նախ ողբերով և ապա ուրախութեամբ և անառակ խնջոյքներով» (թարգմ. Ս. Գրոց, Կ. Պոլիս 1891)։

Մեր ձեռագիր հին բառարաններն էլ տալիս են «Թամուզն Ադոնիս է» մեկնութիւնը (տես. ցուց. Գէորգ. Կաթ. № 37)։ Չունիմ ձեռքի տակ այս խնդրի մասին նոր գիտնական գրքեր՝ խնդիրն աւելի ճշտելու համար։

Սակայն գոնէ ինձ համար պարզ է, որ այս կէտումն էլ Խորենացին, ինչպէս միշտ իւր աղբիւրներում, օգտուել է ս. Հայրց գրուածքներից, վկայաբանութիւններից, սրբագրկան (hagyographi) երկերի հայ Թարգմանութիւններից։ Եթէ միայն Արամազդի հաստուածը յետին ընդմիջարկութիւն չէ։ Հայոց մեծ Արամազդին մօտ դնում է «չորից ևս այլոց անուանեցելոց Արամազդ (=Թամուզ), յորոց մի է կունդ ոմն Արամազդ»։ Հաւանական է, որ Թամուզի չորս դէմքերը տարուայ չորս եղանակներն էին պատկերացնում, որոնցից մէկը կարող էր լինել Կոնդ (ձմեռը), կամ լաւ ևս [illegible], որ մի ակնարկութիւն կարող էր լինել Թամուզի այս կամ այն կերպարանափոխութեանը կամ [illegible]։ Այս կէտը կպարզուի Թամուզի աւելի մօտաւոր ծանօթութեամբ, եթէ, միայն հաստատուին իմ այս ենթադրութիւնները։

(Շարունակելի)։ ՄԻԱԲԱՆ։

ՄԵԾ ԿՐԻՏԻԿՈՍԸ

ԱՌԱՋԱԲԱՆ

Անցեալ տարի՝ փետրուարի 21-ին (ն. տ. մարտի 5-ին) Փարիզում վախճանուեց ժամանակակից Ֆրանսիացի կրիտիկոսներից և պատմաբաններից ամենանշանաւորը՝ Իպպոլիտ Տէնը։ Այս անունը, ինչպէս շատ ուրիշ այս տեսակ անուններ, գուցէ միայն Եւրոպա համար լինի հայ ընթերցողի ականջին, մինչդեռ Տէնն այն երևելի մատենագիրներից է, որոնց համբաւը դեռ իրանց կենդանութեան ժամանակ անցնում է հայրենի սահմաններից շատ հեռու։ Տէնի գրուածները թարգմանուած են եւրոպական բոլոր գլխաւոր լեզուներով։ Մի քանի համալսարաններում նոքա կազմում են լուրջ ուսումնասիրութեան առարկայ։ Գրականական քննադատութեամբ պարապողին մի քայլ անգամ չէ կարելի անել ներկայումս առանց ծանօթ լինելու նորա գրուածների հետ։ Նոյն իսկ գեղարուեստագէտները ստիպուած են խոստովանել այն ահագին օգուտը, որ ընձեռում է նրանց՝ Տէնի ընթերցումը։ Ակնյայտնի է, որ այդ տեսակ մի գրողի մահը ոչ միայն չէր կարող մնալ աննկատ, այլև առիթ պիտի տար բազմաթիւ կարծիքների, յիշողութիւնների ու քննադատութիւնների երևան գալուն։ Եւ յիրաւի, իւր մահուամբ Տէնը շատերին խօսեցրեց իւր մասին, և խօսողները հասարակ լրագրական աշխատաւորներ չէին միայն, որ կոչուած են ի պաշտօնէ՝ կազմել իւրաքանչիւր փոքր ի շատէ նշանաւոր հանգուցեալի մահացուցակը, այլև մի շարք հռչակուած և հեղինակաւոր մատենագիրներ։ Գօդէ, դը Վօգիւէ, Բրանդէս, Գերիէ, Արսէնիէ.... ահա ինչ յայտնի անունների ենք հանդիպում մեծ Ֆրանսիացի կրիտիկոսի բնաւորագիրների ու քննադատների երկայն ցանկում։ Միայն մենք՝ հայ գրողներս ենք, որ հաւատարիմ մեր անգիտութեան ու անտարբերութեան, այս անգամ ևս չը կարողացանք օգտուել առիթից՝ Տէնի պէս բեղմնաւոր հեղինակի գործունէութեան հետ մեր ընթերցող հասարակութիւնը ծանօթացնելու։ Մի քանի լրագրական ակնարկներով սպառուեց այն ամենը, ինչ ասելիք որ ունէր մեր գրականութիւնը մեծ կրիտիկոսի մասին։ Բայց որքան չնչին բան կը թուին այդ ակնարկներս, եթէ աչքի առաջ ունենանք Տէնի թողած

թանկագին գրական ժառանգութեան մեծութիւնը. երկու ստուար հատորներ, որոնց մէջ ցոլանում է ընդարձակ գիտնականութիւն, զարմանալի ներդաշնակութեամբ միացած հըզօր գեղարուեստական տաղանդի հետ։ Արժէ և նոյն իսկ անհրաժեշտ է, որ այդպիսի մի մատենագրի մասին հայ ընթերցողը աւելի կատարեալ գաղափար կազմէ։ Հայ ընթերցող ասելով ես ոչ միայն սովորական ընթերցողին ունիմ ի նկատի, այլև մեր այն գրողներին, որոնց պակասում է գիտութիւն, գրական և գեղարուեստական զարգացում, ընդհանուր սիստեմատիկական աշխարհահայեացք։ Այդպիսիների համար մանաւանդ՝ Տ'էնի պէս բազմակողմանի զարգացած, ժամանակակից գիտութեան բարձրութիւնից նայող, ճշմարտասէր, պարզ և դիւրամատչելի հեղինակները վերին աստիճանի հրահանգիչ և խրատական նշանակութիւն ունին։ Մեր ընտրութիւնը ֆրանսիացի մեծ կրիտիկոսի վրայ ընկաւ և մի մասնաւոր պատճառով։ Մի ժամանակ պրոֆէսոր Գէրիէի առաջնորդութեամբ մենք բախտ ենք ունեցել ուսումնասիրելու ֆրանսիացի մատենագրին, իսկ մի երեք-չորս տարի առաջ ուշադրութեամբ հետևել ենք Տէնի ուսումնասիրութեանը նուիրած՝ նրա մի շարք գեղեցիկ յօդուածներին, որոնք տպագրւում էին „Вѣстникъ Европы“ ամսագրում։ Ցաւակցաբար, Գէրիէի այդ ընդարձակ յօդուածները այժմ չունինք ձեռքի տակ. թերևս վաղաժամ էլ է հայ ընթերցողին այդքան մանրամասն և տեղ-տեղ դժուարամարս գրուածների հետ ծանօթացնելը. ուստի մենք մեզ առաջնորդ ընտրեցինք նոյն Գէրիէի մի ուրիշ յօդուածը, որ հրատարակուեց անցեալ տարի „Русскія Вѣдомости“ լրագրի էջերում և որ կարող է համարել համառօտ ամփոփումն նորա նախկին՝ մայրաքաղաքի ամսագրում տպագրած յօդուածների։ Աչքի առաջ ունեցանք նաև Բրանդէսի և Արսէնեւի յօդուածները, այլև Տէնի երկասիրութիւններից մի քանիսը, ինչպէս՝ Essai sur Tite Live, Hisoire de la littérature anglaise (ռուս. թարգմ. երեք հատոր), Les Origines de la France contemporaine (միայն առաջին հատորը) և այլն։ Մեր նպատակը համեստ է. Տէնի կեանքի և գործունէութեան գլխաւոր կողմերի հետ ծանօթացնելով՝ մենք կամենում ենք միայն շարժել մեր գրողների, մանաւանդ մեր հին և նոր գրականութեան քննական ուսումնասիրութեամբ պարապողների հետաքրքրութիւնը ֆրանսիացի հեղինակի նկատմամբ։ Գուցէ մեր թարգմանիչները նմանապէս յանձն առնեն գէթ քաղուածօրէն հայերէնի վերածել Տէնի ընտիր փաստակները, որոնք իւրաքանչիւր լուրջ հայ գրականագէտի պատուական ուղեցոյցները և սեղանի զարդերը կարող են դառնալ։

I

Իպպոլիտ Ադոլֆ Տէն ծնուեց 1828 թւին գերմանական սահմանագլխի մօտ գտնուող Վուզիէ քաղաքում։ Մօր կողմից Տէնը մասամբ անգլիական ծագումն ունէր, իսկ նրա հայրը մի համեստ ֆրանսիացի իրաւաբան էր։ Ամերիկայից վերադարձած իւր հօրեղբօրից Տէնը սովորեց անգլիերէն, իսկ գիտական գործունէութեան նախապատրաստութիւնը ձեռք բերեց գերմանական փիլիսոփայութեան ուսումնասիրութիւնից։ Այսպիսով թէ իւր ժառանգական հակումների և թէ իր ստացած կրթութեան շնորհիւ Տէնը կարծես նախապատրաստուել էր միջազգային գրող լինելու։

Բարերար ազդեցութիւն ունեցան մեր հեղինակի վրայ և իւր հայրենիքի շքեղ անտառները. Տէնը ջերմ սիրեց բնութիւնն ու ազատութիւնը։ Կենդանական ու բուսական աշխարհի հետ հաղորդակցելը նրա համար մի գեղեցիկ միջոց դարձաւ մարդկային հասարակութեան ժխորից ու տագնապից խոյս տալու։ «Երբ չափազանց երկար ես նայել մարդու վրայ, ասում է Տէն իւր առաջին՝ երիտասարդութեան գրուածներից մէկում, այլևս ցանկութիւն չը կայ նրա վրայ նայելու։ Նրա երեսին չափազանց շատ կնճիռներ կան,

նա չափազանց շատ է աշխատել. Հարիւրաւոր տարիներ, հազարաւոր յեղափոխութիւններ, միլիօնաւոր կուտակուած խաչեր դրել են իրենց կնիքը նրա հոգու վրայ։ Նրան ոչինչ չի տուած, ամեն ինչ նրա մօտ ձեռք է բերուած։ Նրա իւրաքանչիւր շարժուածքը, դէմքի իւրաքանչիւր գիծը, զգեստի իւրաքանչիւր ծալքը վկայում են նրա ահագին աշխատանքի մասին։ Մենք ճնշուած ենք փորձից, մենք քաշում ենք մեր հետևից՝ որպէս շղթայ նախընթաց ճիգերի ու տանջանքների արդիւնքները։ Ժամանակակից մարդը ժամանակակից մայրաքաղաքներից մէկին է նման. սալայատակը պատում է գետինը, տները ծածկում են աչքից երկինքը, արուեստական լոյսը հալածում է գիշերային մթութիւնը, գիւտերն ու յայտնագործութիւնները բռնում են փողոցները. ստորերկրեայ խողովակները, ծովափնեայ պողոտաները, պալատները, յաղթական կամարները, մեքենաները ներկայացնում են փառահեղ, բայց տխուր տեսարան այլակերպուած բնութիւն։ Մեզ յոգնեցրել են այս թանգ նստող հրաշքները, մենք կամենում ենք փախչել նոցանից որքան կարելի է հեռու—կենդանիների մօտ, որոնք մնացել են տակաւին ինչպէս առաջին օր, ժառանգական հաշիւների ու ճիգերի բեռից ազատ ... Մինչև անգամ ստրկացած նոքա ազատ են, մեր իշխանութիւնը նոցա վերայ – միևնոյն է թէ մրրիկի կամ փոթորկի իշխանութիւն։ Իսկապէս նոքա ամենքը ազնուական են. եթէ նոքա բանական լինէին, մեզ պէս կասէին, ինչպէս մանուկները։ Եւ յիրաւի, նոքա մանուկներ են՝ իրանց աճելութեան մէջ կանգ առած և մանկութեան անկախութիւնն ու գեղեցկութիւնը պահպանած։ Միևնոյն սրտաշարժ սիրով Տէնը սիրեց և բոյսերն ու տունկերը։ Դաշտի սօսիների շարքը նորան թւում է «եղբայրական ընտանիք, որի յաւիտենական շշունջը սփոփում է միևնոյն խօսքը։ Որքան տագնապալի է մեր կեանքը, այնքան հրապուրիչ է մեզ համար ծառերի հանգստութիւնը։

Մենք համարեա զարմացած ենք, առաւօտեան նրանց նոյն տեղում տեսնելով, որտեղ թողել ենք նրանց՝ երեկոյեան։ Մենք ուզում ենք հարցնել նրանց, ինչ էին անում նոքա գիշերը, լռութեան և մթութեան մէջ, աղջամղջի թափանցիկ ծածկոյթի ներքոյ։ Մեզ թւում է, թէ նոքա պէտք է ուրախացած լինեն, երբ արշալոյսը իւր չքնաղ ճառագայթով դիպած լինի նոցա նուրբ կատարին։ Նոքա բերում են մեզ վրայ հազարաւոր հմայիչ երազներ, որ սնւում են առանձնութեամբ և չքանում են, հէնց որ մենք հանդիպում ենք մարդու հետ . . . «Ես չը գիտեմ ոչինչ աւելի սրտայոյզ բան,—ասում է հեղինակը քիչ յետոյ,—քան աշնանը՝ կտորած անտառի տեսարանը։ Ընկած բուները կիսով չափ ծածկուած են խոտով։ Կտրտուած ոստերը և ջարդուած տերևները կախւում են գետնի վրայ։ Լայն բացուած վէրքերից ծորում է կարմիր հեղանիւթ, թփերի միջև երևում են կոճղեր, կացնով խեղանդամ արած, Ամբողջ անտառը այն ժամանակ մռայլ և լռին է դառնում. մանրամաղ, ցուրտ անձրևը թափւում է մոխրագոյն կանաչի վրայ. միգապատ օդով, ինչպէս շղարշով փաթաթուած ծառերը կարծես լալիս են իրանց հանգուցեալների վրայ . . .»

Բայց որքան մօտ էր սրտով մեր հեղինակը բնութեան ու նորա զաւակներին, բաղդը նորան անցկացրեց ժամանակակից գիտութեան և քաղաքակրթութեան բովից և Տէնը վայլ ճաշակեց այդ գիտութեան և քաղաքակրթութեան չարն ու բարին։

Ֆրանսիայի բարձրագոյն ուսուցչական դպրոցում - Ecole Normale - ի մէջ - ձեռք բերելով հիմնաւոր տեղեկութիւններ պատմութիւնից ու փիլոլոգիայից, Տէնը ծառայութեան մէջ մտաւ։ Համալսարանական բարձր իշխանութիւնը խէթ աչքով նայեց՝ արմատական հայեացքներով տոգորուած երիտասարդ գիտնականի վրայ։ Սկզբում նորան ուսուցչի օգնականի պաշտօն տուին մի գաւառական քաղաքում. յետոյ նոյն պաշտօնով Տէնը փոխադրուեց մի ուրիշ գաւառական քաղաք՝ վերջապէս, իսկական ուսուցչի տեղ խնդրելով,

նա նշանակուեց վեցերորդ ուսուցիչ Բէզանսօն քաղաքում . . . Դառնացած սրտով նա հրաժարուեց այդ պաշտօնից, ու հաստատուեց մայրաքաղաքում։ Փարիզում Տէնն անցկացրեց տասներեք տարի անընդհատ աշխատութեան մէջ, ուսումնասիրելով փիլիսոփայութիւն և մաթեմատիկական ու բնական գիտութիւնները։ 1865 թուին բախտը սկսեց ժպտալ երիտասարդ գիտնականին։ Մինչ ֆրանսիական Ակադեմիան նոր էր հրաժարուել նորա հռչակաւոր Անգլիական գրականութեան պատմութիւնը մրցանակով պսակելու, պրինց Նապոլէոնի հովանաւորութեան շնորհիւ Տէնը պրոֆէսորի պաշտօն ստացաւ գեղարուեստից ճեմարանում՝ տարեկան 5000 ֆրանկ ռոճիկով։ Մի քանի տարի յետոյ՝ 1869 թուին ամուսնի բերած օժիտը աւելի բարուոքեց Տէնի նիւթական դրութիւնը, այնպէս որ երբ նրա առողջութիւնը խանգարուեց, նա վերջնականապէս թողեց ուսուցչապետի գործունէութիւնը և անձնատուր եղաւ իւր սիրած գրականական աշխատութիւններին։ Վերջին քսան տարին՝ տկարութեան պատճառով Տէնը մեծ մասամբ Մենտօն—Սէն—Բէռնարումն (Սավոյա) էր ապրում, տարին մի չորս ամիս անցկացնելով Փարիզում։ Մենտօն—Սէն—Բէռնարում և ընտանեկան հանգստարանի մէջ ամփոփուեցաւ մեծ կրիտիկոսի մարմինը։

Տէնի ծանօթներից ու հետևողներից մէկը՝ Բրանդէս վկայում է, որ ֆրանսիացի մատենագիրը մինչև անգամ իւր քառասնամեայ հասակում իւր հայրենիքում ամբարիշտ ապըստամբի համբաւ ունէր, իսկ Դանիայում վերիվերոյ անձնաւորութիւն էր համարւում. մինչդեռ յիշենք, որ քիչ յետոյ Տէնն ընդունուեց «անմահների» կաճառում, ընտրուելով Ֆրանսիական Ակադեմիայի անդամ, իսկ նորա մահից յետոյ նրա անունը սկսեցին յիշել միւս մեծ ֆրանսիացու՝ Էռնեստ Ռընանի անուան հետ անբաժան։ Քննադատների մեծագոյն մասը առաջնութեան արմաւենին գիտութեան ասպարիզում Ռընանին է յատկացնում, բայց որպէս անձն՝ Տէնն անշուշտ աւելի համակրելի է։ Տէնն այն հազուագիւտ գործիչներից էր, որոնք գաղափարին ծառայելում ինքնամոռացութեան են հասնում։ Իւր ամբողջ աշխատալի կեանքը նա նուիրեց գիտութեան ու գրականութեան, և եթէ երբեմն շեղուեց ճշմարտութիւնից, դա գիտակցական սխալի կամ եսասիրական հաշուի հետևանք չէր, այլ բուռն և անկեղծ յափշտակութեան արդիւնք, մի թերութիւն, որ նա ինքը կողմնակի կերպով խոստովանում է. «մեր բոլոր գիտական մեթոդները,—ասում է Տէն,—գեղարուեստական ձևերը, ընդհանուր գաղափարները ունին որևէ թոյլ կողմ. այս կամ այն բանը նոցա մէջ անբաւարար է, անճիշդ է, պայմանաւոր է, նրանց կատարեալ գտնելու համար հարկաւոր է հաւատ, հարկաւոր է սիրոյ մըտապատրանք»։

Անձամբ մօտ կանգնած լինելով մի քանի ազդեցիկ բոնապարտիստների՝ Տէնը երկար ժամանակ այդ կուսակցութեան համակրող էր համարւում, բայց այդ կարծիքը բոլորովին փարատուեց, երբ Տէնն անխնայ քննադատութեան ենթարկեց Նապոլէոն I-ի գործունէութիւնը, որով զրկուեց իւր վաղեմի մտերիմ պրինցէս Մաթիլդի բարեկամութիւնից։ Առհասարակ, շատ ուրիշ նշանաւոր մարդկանց պէս Տէնը չը գիտէր շփոթել իւր պարտաւորութիւնները որպէս մասնաւոր մարդու և որպէս գիտնականի։ Վերին աստիճանի համեստ և ներողամիտ՝ մասնաւոր յարաբերութիւնների մէջ, նա անյողդողդ էր և անընկճելի, երբ բանը գիտութեանն էր գալիս։ «Իմ մէջ երկու մարդ կայ,—ասում էր նա,—կեանքի մարդ, որ ուտում է, խմում է, կատարում է իւր գործերը, աշխատում է օգտակար լինել և խոյս է տալիս ուրիշներին վնաս պատճառելուց։ Այդ մարդը իմ առանձնարանի շեմքի յետևին է մնում։ Եթէ նա գլխարկ է դնում, ձեռնոցներ է հագնում, ինչպէս ամենքը հասարակութեան մէջ, եթէ նա նոյնպիսի համոզմունքներ, գործողութեան նոյնպիսի եղանակ ունի, ինչպէս ամբողջ հասարակութիւնը, դա հասարակութեան գործն է։ Իսկ

իմ մէջի միւս մարդը, որ հաղորդակցում է փիլիսոփայութեան հետ, որ ժխտէ այդ հասարակութեան գոյութեան մասին։ Եւ Տէնն, որքան հնար կար, հաւատարիմ մնաց այդ սկզբունքին իւր ամբողջ գիտնական գործունէութեան ընթացքում։ Նա չը ծածկեց իւր դժգոհութիւնը Ֆրանսիայի այժմեան քաղաքական կազմակերպութիւնից, (նրա սիրածը անգլիական կառավարչական սիստեմն էր՝ որ հաշտեցնում է պահպանողականութիւնը առաջադիմութեան հետ)—և վերջին խօսքը, որ նա նուիրեց իւր հայրենիքին՝ այս է. «անշեղ՝ անանկութեան է դիմում»։ Հարկաւո՞ր է արդեօք ասել, որ Տէնը իւր մահուան բոլէին ժողովրդականութիւն չունէր. բայց,—ինչպէս իրաւացի նկատում է նրա աշակերտը՝ Բրանդէս,—երբ որ մոռացուի օրուայ տրամադրութիւնը, նրա անունը նորից կը շողայ իւր ամբողջ փայլով։

Ե. ՄԱԴԱԹԵԱՆ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԼՈՒԱՑԷՔ ՁԵՐ ՁԵՌՔԵՐԸ

Հիւանդանոցների մէջ՝ Վիէննայում, ախտագիտութեան ուսուցչապետը, երբոր ժանտատենդի (la fièvre typhoïde-փորլուծ) վրայ աշակերտներին դասաւանդելու պէտք ունենայ, ստիպուած կը լինի մերձակայ քաղաքներից այս տեսակ բռնուած մի հիւանդ փոխ առնելու։ Վիէննայում ժանտատենդը հազուագիւտ երևոյթներից է։ Գերման բանակին մէջ Ֆալէկը երկար ժամանակներից ի վեր մեռածների վիճակագրութիւնից ջնջուել է արդէն. տարը տարուց ի վեր այս հիւանդութեամբ ոչ մի դէպք տեղի չէ ունեցել։ Բաղէնի Մեծ-Դքսութեան մէջ շները այլևս չեն կատաղում։ Վերջապէս Ֆրանսիայում Պարիզի մէջ մահերի ցուցակը հետզհետէ զգալի կերպով նուազում է. այնչափ շատ՝ որ, օրինակի համար, վեր առնենք ժանտատենդը, ինչպէս որ բարձրը նշանակել եմ, մահացութիւնը, իւր ամբողջութեան մէջ, 11-ից իջել է մինչև 3—4 և 3—6-ի հարիւր հազար բնակիչների համեմատութեամբ։ Բոլանդակ աշխարհին յայտնի է, որ ժանտախտը և բորը (ուրկութիւնը), այս երկու զարհուրելի հիւանդութիւնները մեր գաւառներից (ֆրանսական) և գրեթէ մեր երկրից գլխովին անհետացած են։

Այս ուրեմն կան հիւանդութիւններ, որոնցից կարելի է խուսափել և որոնք «[illegible]» ընկնելու կոչումն ունին. և՝ առանց չափազանցութեան, կարող ենք ասել, որ բոլոր որընթաց հիւանդութիւնները ու բոլոր համաճարակները, այսպիսի հանգամանքում բուժւում են առանց դեղ ու դարմանի. այլ միայն առողջապահական պարզ գործադրութեամբ, և ընդհանուր կամ առանձնական մաքրութեան միջոցաւ։

Ֆրանսական հանճարին էր վերապահուած բաց անել և անժխտելի կերպով ցոյց տալ կեանքի այս մեծ օրէնքը թէ՝ հիւանդութիւնները ախտածին մանր կենդանիների գործունէութիւններն են. այսինքն թէ, սկիզբն են առնում մեր գործարանաւորութեան մէջ մուտ գործած և նոյն տեղ աճում սաստած վերջին աստիճանի մանր մարմիններից։ Եթէ արդարև այս օրէնքը ճշգրիտ է, անկերև է, որ մենք կարող ենք այս անհունապէս փոքրիկ կենդանիների մեր մէջ մուտքը արգելել ու նրանց արագ աճելը խափանել. այդ եղանակաւ ի հարկէ մեզանում հիւանդութեանց զարգանալը կարգելենք։

Անտարակոյս ամենօրեայ փորձն է, որ ապացուցանում է այս ճշմարտութիւնը։ Աչքի առաջ բերենք, օրինակ, մեծ քաղաքները, այն է մարդկային խոշոր կուտակութիւնները, ուրտեղ մահացութիւնը աւելի աչքի է ընկնում։ Ուշադիր լինինք օդի փոփոխութեան համար շէնքերը քանդող բրիչի աշխատութեան, կամ ջրի շրջանառութեան դիւրութիւն տալու միջով հողի փորուելուն և կամ աղտեղութեանց մաքրութեանը, այն ժամանակ մենք քայլ առ քայլ կը հետևինք նաև մահացու դէպքերի 50, 60, 80 % նուազման. երբեմն նաև, և այս ոչ հազուագիւտ դէպքերում, յայանուող հիւանդութեանց վաղեմի կենդրոնների իսպառ անհետանալուն։

Քաղաքների արդ ու զարդն (la coquetterie) ու մաքրութիւնը ազգաբնակութեան առողջութիւնն են կազմում։

Այն ինչ որ ճշմարիտ է բազմամարդ քաղաքների համար, շատ ճշմարիտ է նաև մասնաւորապէս մեզանից իւրաքանչիւրի համար։

Ներկայ վիրաբուժութեան արտակարգ և հրաշալի յաջողութիւնները հաստատում են

Պաստէօրի մեծ օրէնքը: Եթէ արտաքուստ եկած սերմերով և վէրքերի թունաւորելովն է, որ տեղի կունենան վիրահատութեան մէջ (opérotior) միմեանց յաջորդող դժբաղդ պատահարներ և մահ, դուք արգելեցէք այս սերմերի ձեր մէջ արած ներգործութիւնը, և դուք չէք ունենալ ոչ դժբաղդ պատահար և ոչ մահ: Բուն իսկ այս պատճառաւ մաքուր եղէք. վիրաբուժական գործողութիւնը կատարեցէք մաքուր գործիներով, մաքուր միջավայրի մէջ, և մինչև անգամ խնամքով մաքրուած մարմնի վրայ:

Այն վիրաբոյժը որ մի վիրահատութիւն կատարելու վրայ է, սկսում է նախ և առաջ իւր գործողութիւնը բաղնիս ընդունելով, և բոլոր օգնականները՝ որոնք իւր մօտը կը լինին, միևնոյն օրինակին են հետևում: Նա ոչ մի հիւանդի չէ այցելում, վէրքով հիւանդին համման գործողութիւնը կատարելուց առաջ: Բոլոր գործիները լուացւում են հականեխական հեղուկի մէջ. մարմնի այն մասը՝ որին դիպչում է նշտարը (bistouri) միևնոյն հեղուկով լուացւում է. վիրաբոյժը և իւր օգնականները, բազուկները մերկ, ձեռքերից սկսած մինչև արմուկները թաթախում են նոյն հեղուկի մէջ, և գործողութիւնը կատարելիս, ոչ մի անգամ չեն սրբւում՝ որչափ որ էլ օդային փոշիների ազդեցութիւնից զերծ պահող գզրոցներից (armoire) նոր դուրս հանած անարատ գոգնոցներ կապած ունին: Միով բանիւ խուսափում են, նոյն իսկ անուղղակի, յարաբերութիւն հաստատելուց վէրքի և որա մակերևոյթի միջև՝ որ մի գուցէ վէրքը ախտածին սերմեր իւր մէջ ընդունելու պատճառ ունենայ: Շնորհիւ առողջապահական այս նախազգուշութեանց և ամենուրեք ընդհանրացած մաքրութեան՝ յաջողութիւնը նորանումն է որ, վիրաբոյժները հետզհետէ ընտելանում են առ ոչինչ համարել միջավայրի պղծութիւնը, ուր նրանք կտրելու, ծակելու և այլն գործողութիւններ են անում և բժշկում իրենց խնամից յանձնուած վէրքը, որչափ էլ նեխած լինի այս միջավայրը, որչափ էլ միկրոբներով հարուստ ներկայանայ նա. նրանք գիտեն թէ կարող են արգելել այս միկրոբներին վիրահատութեան վայրը մտնելուց առաջ. և այս արդէն բաւական է, քանի որ վերջինս ապահովուած է լինում:

Է՜հ լաւ ուրեմն. մեզանից իւրաքանչիւրս վիրաւորի և վիրաբոյժի դրութեան մէջ չե՞նք արդեօք. միթէ մենք բուն ապականուած մթնոլորտում չե՞նք ապրում. մեր ձեռքերը ամեն մի վայրկեան չե՞նք տանում դէպի միշտ բաց եղող մի վէրք, որ մեր բերանն է, մի խորխորատ՝ ուր գահավիժում են մեզ լափելու պատրաստ միլիոնաւոր մանրադիտական (միկրոսկոպիքական) ճիւաղներ:

Ա՜խ, ձեր ձեռքերը, նայեցէք նորանց որչափ աղտոտ են. առաւօտից ի վեր միմիայն մի անգամ, այն ևս կէս ու կիսա՞տ էք լուացել – ո՞չ: Եւ այն անշնորհք կորուած և սևաւուգ ու (en deuil) եղունգները. ի՞նչ էք կարծում, իրենց տակը և մորթի ծակտիներում սև ու խոնաւ ճարպոտ կեղտի մէջ ո՞րչափ հիւանդութիւններ պահուած են. մտածեցէք. գիտէք թէ այս օրը ձեր ձեռքերը ինչպիսի տեղեր են քաշ եկել. ո՞վ է իմանում ինչ բաների էք ձեռք տուել, և մէկ կողմից միւսը ինչպիսի՞ համաճարակ հիւանդութեանց բներ մէջ տղմաթաթախ էք արել (patauger) նրանց. և յետոյ՝ տանում էք ձեր բերանը, անգիտակցաբար և անհոգութեամբ բռնում էք ձեր ուտելու կերակուրները. մինչդեռ դուք կը զարհուրէիք, եթէ ձեզ ցոյց տային, որ ինչպիսի բացիլները վխտում են այդ նիւթերի վրայ: Այս դրութեամբ՝ փչանում են նաև ձեր ատամները, շատանում են կոկորդի և ուրիշ զանազան մասերի գրգռումները. և դուք անընդհատ որս էք դառնում բոլոր այսպիսի անհամար ցաւերի, բոլոր շարունակ ձեզ պաշարող հիւանդութիւնների, որոնք բարեբաղդաբար առանձին առողջանում են. մինչև որ մի օր կեղտոտ ձեռներով ձեր մէջ մտցնէք ժանտատենդի, թոքերի բորբոքման, կուրծքի արիւնահոսութեան գեղեցիկ բացիլներ. երախամաշկի (muguet) մի օիդիօմ կամ ինֆլուէնցիայի մի միկրոբ (steptocoque), որոնք մահացուցիչ են ձեզ համար: Ո՜վ դու կեղտոտ վիրաբոյժ, դուք թունաւորել էք ձեր սեպհական վէրքը և դուք մեռնում էք ձեր սեպհական հիւանդութեամբ:

Ուրեմն կատարեցէք ինչպէս քաղաքը և ինչպէս խելքով շարժող վիրաբոյժը ձեզ խորհուրդ են տալիս. մկրատը ձեր եղունգների մօտ ունեցէք, խոզանակին ու օճառը ձեր ձեռքերումը մանաւանդ ուտելուց առաջ լուացէք ձեր ձեռքերը մի անգամ ևս աւելի դուք պիտի ապացուցանէք Ֆրանսիական գիտութիւնը, և՝ յօգուտ ձեր և յօգուտ ամբողջ աշխարհի, պիտի նուազեցնէք հիւանդութեանց պատճառը և սեպհական մահուան դէպքերի վիճակագրութիւնը – սոսկալիկան:

Թարգ. Ֆրանսերէնից Գ. ՉԻԼԻՆԿԻՐ.

ՎՐԻՊԱԿ:

«Արարատ»-ի անցեալ համարում էջ. 10. առաջին սիւնակ տող երկրորդ՝ տպուած է «վերծանութեամբ», պէտք է լինի «վերածնութեամբ»:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԾՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Ա.

ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՌՆԻԿ.

Բ.

ՄԱՐԳԱՐԻՏ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ

ԵՐԿՆԻՑ.

Գ.

ԽԱՉԻ ՃԱՌ.

Ա. ՏԷՐ-ՄԻՔԵԼԵԱՆ.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵ-ՑԻՆ

ԵՒ

ԲԻՒԶԱՆԴԵԱՆ ԺՈՂՈՎՈՑ

ԿԱՆՈՆՆԵՐԸ

ՊԱՐԱԳԱՅՔ.

Մոսկվա 1892. գինն է 1 ր. 50 կոպ.:

ծախւում է կենդրոնական գրավաճառանոցում

և

հեղինակի մօտ

Ի Ս. Էջմիածին.

ՍԱՄՈՒԷԼԻ ՔԱՀԱՆԱՅԻ

ԱՆԵՑՒՈՅ

ՀԱՒԱՔՄՈՒՆՔ Ի ԳՐՈՑ ՊԱՏՄԱԳՐԱՑ

ՅԱՂԱԳՍ ԳԻՒՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՑ ԱՆՑԵԼՈՑ

ՄԻՆՉԵՒ Ի ՆԵՐԿԱՅՍ

ՓԱՅՐԱՔԱՂ ԱՐԱՐԵԱԼ

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՎ, ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ, ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐՈՎ ԵՒ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ-ՆԵՐՈՎ

ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՄԻՔԵԼԵԱՆԻ.

ԷԼԻԶԷ ՌԵԿԼԻՒ

ԼԱԶԻՍՏԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՔՈՒՐԴԻՍՏԱՆ

ԿԻԼԻԿԻԱ, ՓՈՔՐ ԱՍԻԱ, ՄԻՋԱԳԵՏՔ

ԵՒ

ՊԱՂԵՍՏԻՆ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՄԻՀՐԱՆ

(Արտատպած «Արարատ» ամսագրից):

ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԴԱՐ.

Ն. ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆ

ԾԱԽՒՈՒՄ Է ՏՓԽԻՍ,

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ.

ՕՐԱՑՈՅՑ

1894

ԱՄԻ

ԱԶԴ·

ՏՊԱՐԱՆԻ ՏԵՍՉՈՒԹԻՒՆԸ խնդրում է այն բոլոր վիճակային Ատեաններից և գործակալներից, որոնք ցարդ չեն ուղարկել ներկայ Թուականի «Արարատի» բաժանորդաց ցուցակը, բարեհաճեն շուտափոյթ ուղարկել։

Այլ և խնդրում է մինչ Ապրիլ ամիսը յետ ուղարկել տպարանին, 1894· անվաճառ մնացած օրացոյցները· հակառակ դէպքում պատասխանատու կլինեն իշխանութեան առաջ։

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵՆ ԵԿԵԼ

ԱՒԵՏԱՐԱՆՔ

ԻՒՂԱԲԵՐԻՑ՝ ՀԱՆԴԻՍՏԵԱՆ, ԲԺՇԿՈՒԹԵԱՆ, ՏԱՃԱՐԻ ԵՒ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ·

փ ա ռ ա կ ա զ մ ։

ՎԱՃԱՌՈՒՈՒՄ Է ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՆԵՐՈՒՄ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ԱՏԵԱՆՆԵՐՈՒՄ

Գրաբառ փոքրադիր փառակազմ

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

ԳԻՆՆ Է 70 ԿՈՊԷԿ·

Կարելի է դիմել և Տպարանին այս հասցէով·
Типографія Эчміадзинскаго Монаст.

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ա Կ Է

ՓՈՔՐ

Մ Ա Շ Տ Ո Ց

Ի ՊԷՏՍ ՔԱՀԱՆԱՅԻՑ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԻ

ՎԻՄԱՏԻՊ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

ՀԱՏԸ 50 ԿՈՊԷԿ.

Կարելի է ստանալ նկարիչ Ս· Սողոմոնեանից այս հասցէով՝ Тифлисъ. Саркису Согомонянъ. Նոյն տեղից կարելի է ստանալ նմանապէս ՐԱՖՖԻԻ և ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ պատկերները հատը 40 կոպէկ։

ԺԲ· ՏԱՐԻ·

„ԱՂԲԻՒՐ"

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

3 ր· ՊՐԵՄԻԱՆԵՐՈՎ

Ե· Տարի·

„ՏԱՐԱԶ"

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ 6 ր·

Հասցէն՝ Тифлисъ Редакція „АГБЮРЪ" „ТАРАЗЪ".

„ՀԱՆԴԷՍ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ"

ԺՈՂՈՎԱԾՈՒԻ V ԵՒ VI ԳՐՔԵՐԸ

ՄԻ ՀԱՏՈՐՈՒՄ ԱՄՓՈՓՈՒԱԾ

600—700 երեսից բաղկացած գիրքը լոյս կտեսնէ առաջիկայ ապրիլին՝ հարուստ և բազմակողմանի բովանդակութեամբ·

Գ ի ն ն է 3 ր·

Հրատարակիչ՝ Մ· ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ
Մոսկվա։

Հասցէն Москва, Мясницкая д. Ермаковыхъ.